1140. Յանագին իմն երկրաշարժութենէ կործանեցաւ այս քաղաք իվերայ բնակչացն: Եւ յետոյ ինչ Ալնարակ կոչեցեալ իվերայ իջեալ իձորակ մի, արգել զընթացս գետոյն արարեալ զնա յճակ «չի պէսպէս ազնիւ ձկամբք» որպես զրէ Կիրակոս: Բայց երեւի թէ յետոյ վարեալ գառաջակայ հողն եւ զքարինս, եւ անցեալ է, զի տեղացիքն ոչ պատմեցին մեզ չինել պէս ասա ի գառաւիս յճակ այդպիսի: Համարիմ թէ գոնէ գժամանակ ինչ յետ երկրաշարժութեանն քաղաքս մնաց յամայութեան, եւ անտերունչ. մինչեւ Դեմետրիոս Վրաց արքայի՝ որ գայնոյ ժամանակաւ զօրաւոր ոք էր, գալ եւ տանել գդրունս քաղաքիս յերկիր իւր: Բայց ոչ անագանեաց, իմիջոցի անդ միով ղարու, եւ իսկզբան Ժին յետ էր ի շինութեան եւ իբազմամարդութեան:

1255. Մուղալ թաթարք եկեալ կործանեցին զպարիսպ քաղաքիս մեքենայիւք. եւ մինչչեւ էր մուտ արարեալ, բնակիչքն լներքս ձեռօք իւրեանց այրեցին զամենայն գոմունս: Չի ոչ բշնամիք ի ներքս տեղի հանգստի գացեն, եւ ոչ ինչ իւրեանց յառաջ նոցա մատնեացին: Իսկ իբրեւ մտին ի ներքս Մուղալքն, սուր իվերայ եղեալ զբնակիչսն առհասարակ կոտորեցին. որով ապականեալ բաւիւր մնաց այս քաղաք: Բայց յետ երկուց ամաց ի Զարմադանայ նորոգ շինեցաւ: (*Պատմ. Հայ. հաս. յեր.* 296):

1378. Յաւուրսն Սուլղան Մուրատայ Դ. ի ձեռն Դարա-Մուստաֆա Փաշային առաւ յՕսմանեանց ընդ հաւօրէն Վրաստանի. (*անդ, յեր.* 330):

Այլ Խիտապենտե արքայ Պարսից՝ սպարապետութեամբ որդւոյ իւրոյ Համզա Միրզայի հաւ զրազում տեղիս յՕսմանեանց, ընդ որս յայտ է բի եւ զԴանձակ: Այլ ոչ անագանեաց Օսման փաշա Եղտեմիր՝ արշաւեալ՝ յաղթութիւն կալաւ իվերայ զօրավարին Պարսից Իմամզուլի Խանին Դանձակայ, եւ զամենայն երկիրն աւերեաց զՊարտաւ, զԴանձակ, զՋարաբերդ, զԽաչեան, զՎարանդա, եւ զԴիզակ սկսեալ իՋարեաք գետոյն: Զբազումս եւս յազգս Հայոց իսուր սուսերի մաշեաց որպէս եւ զյոլովս գերեաց, մինչեւ իսպառ նկուն առնել զՊարսիկս: Ոչ ստի մնաց եւ այս քաղաք իձեռս Օսմանեանց մինչեւ ցամն 1606:

Յամի 1586, Շահաբաս բազաւորեալ էր, եւ միշտ աչարձակ կայր յերկիրս՝ որք հնտեալ էին յիշխանութենէն Պարսից. ոչ ստի 1605 արշաւեալ հաւ զԱբարատ, վարեաց զբնակիչսն տեղոյն յՍպահան:

1606. Այն ի հյաջորդ ամին՝ վազեաց մինչեւ ի Տփղիս, հաւ եւ զԴանձակ բազում կոտորածովք. եւ աստի վարեաց միայն զայնոսիկ ի Հայոց որք իգաղթելոցն յԱրարատայ յՍպահան փախուցեալ մնային աստ: Եւ իյիշել հաշտութեանն յաւուրս Սուլղան Ահմեդի Ա. մնաց Դանձակ իձեռս Պարսից իրբեւ զամս 110:

Իսկզբան ուրեմնասան զարուն յորպիսի բուռն եւ անողոք պահանջանս հարկաց տառապեր ամենայն Հայաստան յաւուրս Շահ Հիւսեինի. իմարկէ ինոյնս չարաչար վշտագնէր եւ Դանձակ: Յայնմ ժամանակի սկսաւ տունն Պարսից յերերի լինել: Ասպատամբեցան յայնմ կուսէ Աղուանք Բանասարու եւ ապականեին զայն կողմն Պարսկաստանեայց: Եւ աստի Հոնք Կովկասականք իջին իլեռնէն իԿովկասաղուանս եւ զամենայն երկիրն ապականեցին: Այլ նրամանաւ Շահին՝ Խանք զաւառաց, ընդ որս էր եւ Ուղուրլու խան Դանձակայ, ելին ընդդէմ նոցա եւ պատերազմեցան ընդ ասպատամբսն, որոց գլուխ էր Այլի Սուլղան անուանեալ ոմն. այլ միշտ իպարտուրիւն մատնեցան: Առին նոքա զՇամախի քաղաք բազմահարուստ, ապանմամբք կոտորածովք, եւ աւարեցին զնա մերկացուցեալ յամենայնէ: Զնոյն անցուցին ընդ ամենայն վայրսն այնոսիկ: Անցին ապա յայսկոյս Կուր գետոյն, զԱդոմի, զՏայուշ, զԱկաիամ, զՇամգոր, զԴանձակ, զՆորն Ոսկանապատու եւս զբազումս իգլխադրայիցն Պարսաւոց, (որպէս գրէ Կարողիկոս Ադուանից Տէր Եսայի Հասանջելալեան), յորս բազումք կոտորեցան եւ բազմաբիւք իգերութիւն վարեցան:

Գնացին կալան զԲարկուշատ, զՎարանդա եւ զԽաչեան. բայց բնակիչք սոցա աղիսիւք եւ կենդանեօք խոյս տուեալ էին իլերինս: Կովկասականքդ իրբեւ զայծեամն գկնի նոցա ելին իբարձունս իջուցին գլխաւորեալսն, հանեալ իծակուց վիմաց. կազմեցին բանակ ստուար իգերեալ կողոպտեալ՝ աւուն եւ անաստն կենդանեաց, եւ իբեռանց աւարին, անարգել անցուցին ընդ Կուր, տանել հանել իԿովկաս:

1721. Իսկ ինքեանք գեն իձեռին դարձ արարին գալ իվերայ Դանձակայ քաղաքին, ուր Ուղուրլու խան դարձ արարեալ իպատերազմեն, գոր տուեալ էր յայնկոյս՝ նատէր անճարացեալ, եւ յօգն կոչեալ էր զՎախտանկ արքայ Վրաց: Որ իրբեւ յանկարծ եկն, ապատամբքդ առանց վնասելոյ քաղաքին դարձան գնացին: Եւ Վախտանկ դարձաւ իտեղի իւր:

Բայց սովին այսու Դանձակ պարանեցաւ յայլ իմն բշուաոութիւն: Չի յամն յաջորդ՝ դառնայ գայ Վախտանկ իԴանձակեցւոց առնուլ գվարձսն՝ զոր իկոչել անդ իւրեանց խոստացեալ էին: Այլ բէյայնժամ զօրքն Վրաց գինչ ինչ ոչ արարին յամենայն տեղիս, զոր առաւել քան զԿովկասականացն հաւատարի Եսայի կաթողիկոս որ ականատես իսկ ինքեր: Յորժամ մտանէին՝ ասէ ի գիւղ, Հայք որպէս Քրիստոնէի Խաչիւ եւ Աւետարանաւ եւ եկեղեցական փառաւորութեամբ թափօր կազմեալ ընդ առաջ ելանէին: Իսկ Վիրք չարագոյն քան զանհաւատս իվերայ յարձակեալ բաւիւրին նախ գնոսա կողոպտէին, զամենայն եկեղեցական զարդսն յափշտակեալ եւ գկնի ոչ թողուին չարիս՝ զորս ոչ անցուցանէին ընդ գիւղն հաւօրէն. որպէս եւ իդարձին իւրեանց Աղուտեաւս եւս վնասեցին վասն հնոյ ինչ քինու զոր ունէին ընդ բնակիչս զաւառին:

Արդ այսպիսեօք աստի եւ անտի ապատամբքդ վրդովեալ էին գՊարսկաստան, նա գի եւ բազաւորական տուն նոցա գմիմեամբք ելեւէջս առնէր: Եւ ահա մեծն Պետրոս կայսր Ռուսաց՝ անց ընդ դուռն Հոնաց տիրեաց Դարբանտ եւ Պաքու քաղաքաց, որք կան առ եզերբք Կասպից ծովուն, եւ կառուան ոտից եզիտ յայսկոյս Կովկասու:

Դանմասալ որդի Հիւսէինի ինեդ ածեալ էր իմիր Մահմուտայ. խնդրէ ի Ռուսաց զալաշտպանութիւն, յոյր սակս յաւելոյ, տալ նոցա զգաւառս Կասպիականին զԳիլան զՄազանդարան եւ զԱստրապատ: Խնդրեաց նոյնպէս Դանմասալ եւ յՕսմանեանց զպաշտպանութիւն. այլ գի նոքա խիթացեալ էին ընդ դաշն զոր կռուեաց ընդ Ռուս ելին ի պատերազմ: Եւ գառաջին յաջողեր խառնմն Օսմանեանց: Մանաւանդ գի Վրաստան կէս մի ընդ իշխանութեամբ Օսմանեանց էր եւ կէս մի ընդ Պարսկաց հանդերձ Տփղիս քաղաքաւ. զոր եւ խաղաղութեամբ առեալ տիրեցին նմա Օսմանեանք:

Յայսմ իսոյն ժամանակի բանագնացութիւնք իմն էին իԿոստանդնուպօլիս Օսմանեանց ընդ Ռուս առ իբաժանորդելոյ ի միջի իւրեանց զարեւմտեայ եւ գհիւսիսային մասն Պարսկաստանի. եւ յայս կնքեցաւ գի չեռնակողմն ամենայն մինչեւ ցխառնուրդս Կուր եւ Երասխ գետոց՝ սահմանք լիցին Ռուսաց. իսկ անտի ցՀամատան, եւ ցԿիրմանշահան՝ Օսմանեանց լինէին սահմանք: Որով ի ձեռս նոցա անկանէր Դանձակ, Երեւան Մոզսն, Սիւնիք, Ատրպատական, եւ մասն Շիրուանայ:

Մինչդեռ այս բանագնացութիւնք լինէին՝ բանակն Օսմանեան որոց զօրավարք էին Բեօփրիւլիս-զատէ Ալիփաչան փաշա, Արիֆ Ահմետ փաշա, եւ Հաճի Մուստաֆա փաշա, յառաջեր յաշխարհն Պարսից, եւ առնոյր զամուր ամուր քաղաքս նոցա, զՀամատան, զԵրեւան, զԴաւրէժ, զԱրտաւիլ, զԼոռի եւ զՍիւնիս, ընդ որս եւ զԴանձակ յամի 1726. եւ իԿոստանդնուպօլիս վասն առման Դանձակայ յ12 սեպտ, լինի ծովային հանդէս առաւրս ԺԲ: Օրհնագիտացն դասք Օսմանեան դրանն՝ վճիռ տան պատերազմել ընդ Պարսիկս եւ սպանանել իսկ ըզնոսա, իբրեւ գիերձուածողս ոմանս իմահմետական դեն. իւրեանց: Իսկ վասն հպատակ ազգաց նոցա ամփոփեն զվճիռն յայսմ, յորժամ գնարկն արքունի ընդունին սահմանադ նոցա, եւ կանայք եւ որդիք իբրեւ գմերն համարեացին: Թեպէտ գայս վճիռ իխաժամուժ ամբոխն զօրականին ոչ ուրեմն տանեմք պատեալ: Որպէս եւ յայսմ իսոյն ժամանակի, ցայն վայր աղքատացուցին զծողովուրդ Աղգիս մերոյ, մինչեւ առվճար հարկաց եւ տուգանաց՝ վոխանակ դրամոց զուստերս եւ զդստերս տային: Զօրականն եւս ընդ Հայս իբրեւ ընդ բշնամիս իմարտ ընթանային աւարեալ, կիզեալ, կեղեքեալ, յետոյ

զանձինս նոցա եւս ածեալ վաճառեին ի Պօլիս իբրեւ գերեալս իշընամեաց իւրեանց՝ իրուն իսկ Պարսկական ազգին. Տես *Պատ. Օսմ. Հատ. Բ. յեր*, 323 : *Պատ. Հայ. Հատ. Գ. յեր*, 883 :

Մինչեւ Տ. Յովհաննէս Կոլոտ մեծ Պատրիարք Կոստանդնուպօլսոյ, հարկեցաւ բողոքել եալչքրօսին Իպրահիմայ : Որ եւ նա պատուէր հրամանի արձակեաց առ ամենայն զօրավարս բանակին խափան դնել անիրաւութեանցն այնոցիկ : Եւ ինքն իսկ մեծ Պատրիարքն զբազումս իգերեաց անտի գնոց արծաթոյ գնեալ արձակէր իբաց: Ցորոց ոմանց ոչ սակաւք իգանձակեցւոց անտի էին, եւ շատք իսկ արձակուրդ գտեալ նզովիւք չափ ներքեցին զՀայրենիս, կացին մնացին իբազաւորեալ քաղաքին : Բայց ով կարիցէ թուել զորս օտարացն վաճառեցան, եւ ցման պարտաւորութեամբ ծառայեցին նոցա ամենայն անարգանօք : Ուստի այսչափ եւ այսպիսի անիրաւութեանց ոչ կարելով տանել Քաջացն Հայոց որ ի Հալիձոր Սիւնեաց, որպիսիք ոմանք էին Դաւիթ իշխան Սիւնի, եւ նիզակակիցք նորին Մխիթար զօրավար, եւ Տէր Աւետիք զինեցան, զինեցին զԲաջազունս, պատերազմաւ գդեմ կալան, եւ նեղեցին բազմօք զբեւ բանակին Օսմանեան, որ առ Սիւնեաց աշխարհաւ, ազատս պահելոյ զերկիր իւրեանց յաւարառուաց եւ իգերջադղ:

Ցայսմ ժամանակի, զի Տփղիս ընդ իշխանութեամբ Օսմանեանց կայր, հարկ էր նոցա ուստերս եւ դստերս նոյնչափ ամ ըստ ամէնոյն իծածուկ եւ Պարսից վճարեր յապազային:

1735, Յիշատակեալ տեսաք իտարեզրութիւնս ինչ, թէ առերեցաւ Գանձակ մեծաւ հրայրեցութեամբ. եւ որպէս կարծեմ յաւուրս Օսմանեանց պատահեաց այն, գուցէ եւ այդ եղեւ պատճառ փոխադրութեան քաղաքիս. որպէս ոմանք զրել իստորեւ իհին Գանձակ :

1738. Նատըր շահ իկողմանց Բաբելոնի եկն յայսկոյս եւս ձակատ յարդարել ընդդէմ Օսմանեանց, որ եւ առ յիւր նիզակակցութիւն զքաջազունս իՍիւնեաց ընդ որս էր Աւագ վարդապետ *Տէրի մարաստ* կոչեցեալն. եւ զՊապա Մելիք ազգական նորա Մելիք Ադամեանց, եւ առ զամուր ամուր տեղիս զԳանձակ, զԵրեւան եւ զՏփղիս : Ետ պատերազմ եւ առ Ախուրեան գետով, պաշարեաց զքաղաքն Կարուց ; եւ սաստկանայր մարտն ընդ երկար արեան ճապաղեօք յերկուց կողմանց :

1746: Կնքեցաւ հաշտութիւնն ընդ Պարս, յաւուրս Սուլթան Մահմուտի Ա. եւ մնաց Գանձակ ընդ Վրաստանի ընդ Արարատեայ եւ Ատրպատականի իձեռս Պարսից :

1747: Զարաչար սպանաւ Նատըր յիւրոցն, որով դարձեալ վեր իվայր շրջեցաւ տունն Պարսից, եւ այնճփեալ տատաներ յաւէտ իպատերազմունս ընտանիս, եւ տկարանայր տուն բազաւորութեանն: Ինմիմ ժամանակի բազմաթիւ էին եւ իշխողք կողմանցս, *խան* անուանեալք. ոմն իՆոխի, ոմն իՇաքի, ոմն իՏայուշ, ոմն իԶակամ, ոչ կատարեալ հպատակք բազաւորի իւրեանց, եւ ոչ երբէք ընդ միմեանս հաշտընթաց. կամ դաւով միմեանց սպանութեան յինէին պատճառք, կամ պատերազմաւ զսահմանս միմեանց աւարէին. կողոպտէին, գերէին եւ զիշխանութիւն իրերաց խլել աշխատէին: Եւ զարուարագոյնս ի Հայոց վարէին իզինուորութիւն : Նա՛ եւ իմիում տան ոչ պահասէին եղեռնութիւնք սպիրատութեան. եղբայր զեղբարս ընդ սուր հաներ, կամ կուրացուցանէր առ իսպառ անպիտան առնելոյ. եւ թէ ոչ ինքեանք ձեռնհաս յինէին՝ կաշառէին զանգգազոյնս իկովկասականաց, նոցա տային սպանանել. զի կամ ինքեանք միայն հասցեն յիշխանութիւնսիոր իւրեանց, կամ անկասկած վայելեսցեն ինմին: Կացեալ է իԳանձակ Բահիմ խան ոմն, գուցէ յաւուրց անտի Նատրայ, զամանակ ոչինչ չարիս պատմեցին ծերունիք, ընդ որս մեք խօսակից եղաք: Սա հարստազոյն ոմն լեալ է, որ եւ հատեալ զուտ արծաթի դրամ, զոր կոչին *Մահաթ Քըրաճ*, որ եւ այն է ասեն, որ մինչեւ ցայսօր զտանի իգործածութեան :

Երբ կարեաք զշարակարգութիւն իշխողաց տեղւոյս զտանել, կամ ստուգել իպատմողացն մեզ, հաճելի էր եւ զայն գրել, այլ բողոմ գիտակաց եւ բնակչաց տեղւոյն ընդ այլոց պակասորդաց մերոց եւ ուղղութեամբ վրիպանացս՝ զնոյնս եւս տալ իհրատարակութիւն : Ցետոյ իՀիսար գեղջէ Գանձակայ որով եւ *Հիսար օղլու* կոչեցեալ, ձառատ այր ազատոմիկ, չգիտեմ որպիսի ճանապարհաւ անցանէ իիւանութիւն Գանձակայ զոր եւ ընդ երկար վայելէ: Սա մոլեզնոյն գտանի իգեղծ վատարարութիւնս բարուց, եւ դաժան յապիրատ անգթութիւնս, ստեալ էին սորա պատերազմունք ընդ զանազան խանս շրջապնակ գառաւաց. որ եւ զՀայս անգամ վարեր իզինուորութիւն, առատ առատ ոռճիկս վարձուց եւ պարէն տուեալ յառաջն մեն մի հաց ցամաք : Անհաշտ բշնամի եկաց սա ընդ իշխանին Երեւանայ, այնու զի՛ որպէս պատմեցին, զղուսաւ նորա խնդրեալ է յիւր կնութիւն եւ նա չէ արժանի դատեալ զսա իւրում փեսայութեան, որով եւ սա աւերածոյ Գեղամայ եւ Արարատայ մեծի վնասուց դուռն երաց : Խռովեր եւ ընդ Իպրահիմ խանին Շուշւոյ, այլ յետոյ զղուսաւ նորա առեալ, եկաց ընդ նմա ամենայն խաղաղութեամբ եւ միարան, մինչեւ իկոչել զՌուսս, եւ յանձն առնել զինքեանս :

1783. Յունիս 24. Եղեն երկոտասան գլուխք դաշնադրութեանն Ռուսաց ընդ Վիրս յաւուրս Էկատինեայ Ռուսիոյ Կայսրուհւոյն, եւ Հերակլեայ Թէմրազեան բազաւորին Վրաց: Զի սա հայելով իսոնգացեալ բարոյս եղբարց իւրոց, գիտաց թէ հիմն իւեր տապալել ունին զփոքրիկ տուն բազաւորութեան իւրոյ, պայմանաւ ցման իւր բազաւորելոյ՝ յանձն արար իկայսերութիւնն յետ մահուան իւրոյ յաւելեալ յիւր սահման : Այս Հերակլ՝ յոխորտ, յանձնապաստան ոք էր, եւ պատերազմասէր իսկ. եւ ներեր ժամանակի, զի Պարսկական ներքին կառավարութիւնն ընկճեալ տկարացեալ էր, եւ որ աստ խանք հակառակ կային միմեանց, զօրացաւ իվերայ միոյն եւ միւսոյն: Մանաւանդ յորժամ մին ինեղ մտանէր, գաս կորչէր յօգնականութիւն. որով եւ հարկս իսկ իվերայ նոցա պայմաներամբ ամի հատուցանել: Երբ նոքա յետոյ գլանային, երբայր գերկիր նոցա աւերէր: Սա յարձակեցաւ մինչեւ իԽոյ եւ յԱրձէշ, եւ վարեաց զՀայս եւ զՄարս անտի իՎրաստան: Եւ զի պատասպարեալ էր խանին Երեւանայ, զնարկն սաստկութեամբ պահանջեաց, իբրեւ նա յոչ կամս էր վճարելոյ, ի1779 զօր կոտեաց յամենայն կողմանց իւրոց, Թուշ, Փշաւ, Գալազալքան, Մարք, Ջերքեզ, Ախղազ, եւ իՎրաստանեայց զՀայս, զՍաճիկլոս, իԳազագ, իՊալչայու, իՀայտար, իԹամուրչի եւ իՀասանլու վայրաց: Եւ էր զօրս տարեալ իՏփղիս իթագն Հայվազար նըստոյց. որք ղեռ անդ անուանին ինն Երեւանցիք բաղդատութեամբ յետին գաղթականացն, որ կոչին նոր Երեւանցիք : Շարժեցաւ Հերակլ զօրու ծանու իվերայ Ճառատայ, եւ իվերայ Իպրահիմ խանին Շուշւոյ, այլ իբրեւ սոքա ամբացան իդղեակըս իւրեանց, եզիտ գերկիրն բաց առաջի իւր, աւերեաց զատացուածս բնակչացն, եւ գբազում գլուղորայս խաղացոյց իՎրաստան. զՃաճիկսն գաղթեցոյց իՏփղիս, իԹաշիր, իՆասմխեր, իՂօռել, իՍապուհ, եւ առ Այազան գետով մինչեւ իմերձակայս Կովկասու. որք անուամբ եւեր են անդ տաճիկք, մոռացեալ ունին գլեզու իւրեաց, իվրացի խօսին: Բազմաթիւ եւս էին Հայք վարեալք, իգառառացն Տայոցն, եւ Զակամայ Միրաջրեցիք, Շղնեցիք, զորս տարեալ գաղթեցոյց իՍօմխեր, ուր շինեցին գղիւղորայսն Բգնիս եւ Թադէդ, մերձ իՇամշոյդն, իԶուլայեր, իՁաահիեր, նոյն եւ իՄալկայ եւ յԱխալքելիք:

ՀԱՅԿԱԶԵՍՆ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ·

ԱՍՏՈՒԱԾԱՊԱՏԻՒ ՄԱՏՔԷՈՍ ԿԱՔՈՂԻԿՈՍ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Եւ ազգիս հիմնակուռ վիճակը

Ազգային վերջին շաբաթաթերթերը մեծ ու բաղձալի լուր մը կամ մանաւանդ աւետիս մը հրատարակեցին, որում երկար ժամանակէ իվեր սպասեալ մնային ամենայն սիրտ, եւ զոր Հայկազունք ամենայն ընդունեցան ոչ միայն ցնծութեամբ՝ հապա նաեւ ամէն տեղ գոհութեան մաղթանքներ առ Տէր վերառաքելով: — Ո՞վ չգիտեր այս մեծ լուրը, այս մեծայոյս աւետիսը՝ որում եւ ամենայն արեւելեան օսար լրագիրք եւ եւրոպական լրաթուղթ արձագանգ տուին եւ հռչակեցին: Ուրախ եմք որ ազգերնուս պատիւն այս յաստիճան ակնածելի է եղած օսարաց առջեւը, եւ մեր լուրերը այս մասնաւոր ուշադրութեանս արժանի, որ կիմանան՝ թէ մեր Եկեղեցւոյն Գլուխ մը որ կընտրուի՝ Ազգին վրայ ներքին եւ արտաքին յեղափոխութիւն մը կըլլայ, ուսի եւ կփութան զայն նշանակելու, որպէսզի անկէց առաջ եկած արգասեաց ալ պատճառը իւրանչիւր ոք իմանայ, եւ կամ պատճառէն յառաջ գալիք արգասիքը մակաբերէ.

Ի՞նչ է այս ներքին եւ արտաքին յեղափոխութիւն ըսածնիս: — Այն ամենայն բարեկարգութիւն՝ այն ամենայն լրութիւն՝ զոր Եկեղեցւոյն ու Ազգին պէտքերը կպահանջեն:

Այս պէտքերը՝ տարակոյս չկայ որ մեր Ազգն ու մեր Եկեղեցին ունին. ընդհանուր պէտք մը կրսեմք բարեկարգութեան այն ամէն բանի՝ ուսկից կախուած է մեր Հայրենեաց ցանկալի երջանկութիւնը: Ո՞վ չգիտեր մէջերնիս արմատացած երկպառակութիւնները, ոխութիւնները, տգիտութիւնն ու անձնասիրութիւնը: Ո՞վ չգիտեր անոնց աղետալի ու արտասուելի հետեւանքները՝ մինչ ամէն օր ու ամէն տեղ աչքերնուս առջեւն ունիմք, մինչ ամէնս ալ կամ հաղորդ եմք այն հետեւանաց ու կմասնիմք, կամ ուրիշներուն մասնը կտեսնեմք կամ կլսեմք ու կողբամք. . . . . :

« Աստղութիւն խնոյս տաս, իսկ սէր եւ միաբանութիւն խնոյս ինչ », կգրէր մեզ անցեալները Ազգիս պատուաւոր իշխաններէն մէկը, եւ ճշմարիտ կրսէր: Ո՞վ կրնայ ժխտել: Ո՞վ չտեսներ, թէ Ազգիս խեղճութեանց պատճառը՝ իսկզբանէ հետէ՝ անհրաժեշտ ու արտաքին պարագաներէն աւելի՝ այս ներքին յուզմունքներն, այս ներքին ատելութիւններն ու անձնական շահերն են եղեր, եւ կըլլան մինչեւ ցայսօր : Ո՞վ չզգար — եթէ ունի սիրտ մը զգալու —, ով չզգար թէ այս խեղճութեանց դարմանը դիւրին, ուսի եւ իւրանչիւր Հայու պարտին է անոր ձեռնտու ըլլալ:

Դարմանը դիւրին է ըսիմք, որովհետեւ նոյն իսկ մեր մէջի անմիաբանութեանց ու ատելութեանց ներհակ առաքինութեան վրայ է կայացեալ, որ է՝ սէր....: Եւ *իւրաքանչիւր Հայում պարտքն է* անոր համար ըսիմք՝ որովհետեւ իւրանչիւր Հայ ալ նախ եւ առաջ *Քրիստոնեայ* է. այնինքն՝ Անոր աշակերտն է՝ որ ըսաւ. « Սիրեցէս զՔՆՆԵՐ ѳո ԻՐՐԵՒ ԶՆԶՆ ѳո »: Այս աստուածային հրամանէն աւելի քնչ վսեմ օրէնք կրնայ ըլլալ Ազգասիրութեան : Բայց եթէ կայ այնպիսի Հայ մ՝ալ որ ՋՔՆՆԵՐՆ իւր կամ եղբօրը, միով բանիւ զՀԱՅ մը իրեն թշնամի ունի՝ կամ կհամարի, յիշէ թող որ նոյն աստուածային Օրէնսդիրը կհրամայէ թէ *Սիրեցէք ԶՔՇՆԱՄԻՍ ձեր* »:

Չէ. փախուստ չկայ. Հայու մը, կուզեմ ըսել ճշմարիտ Քրիստոնէի մը, — վասնզի *ճշմարիտ Հայ* ոմն չկրնար ըլլալ՝ թէ որ նախ *ճշմարիտ քրիստոնեայ* չէ, — Հայու մը համար կրնեմ անհրաժեշտ պարտք մըն է իր Ազգը սիրել: Եւ ահա այն Սէրն է որ կպակսի, եւ այն է *միակ դժուարն* մեր աղետիցը: Թէ որ Սէր ըլլայ՝ Ազգին մեծամեծին եւ ժողովուրդոյ իրարմէ չեն բաժնուիր: Գործունէութիւնն եւ աշխատասիրութիւն՝ իրենց վարձքը կգտնեն: Ազգասէրն անոր անօգնական չեն մնար: Հասարակաց բարին՝ առանձնականէն վեր կդասուի: Իւրաքանչիւր ոմն Ազատուածմէ ընդունած աստուածական հանճարը կբանեցընէ եւ յօգուտ հասարակաց կշահեցընէ. մէկը իր հարստութիւնը, ուրիշ մը իր մեծազօր ազդեցութիւնը՝ զոր տէրութեան եւ Ազգին դիմացն ունի. այլ ոմն իր հանճարը, ուրիշ մը իր գիրը, շատեր՝ իրենց խօսքն ու գործը. եւ ամէնքը՝ իրենց ՍԻՐՏԸ: Թէ որ սէր ըլլայ՝ Ազգին սուրբ Եկեղեցիքը (այն մեր հոգւոյն խանձարուրը) անշուշ չեն մնար, կզարդարուին կպայծառանան: Աղքատանոցք, որբանոցք, ծերանոցք, հիւանդանոցք, արուեստանոցք կբազմանան եւ կամ նոր նոր կշինուին, ու հետզհետէ կբարեկարգին: Դպրոցք հաստատութիւն կառնուն, կանին ու կանեցընեն զուսումն եւ զգիտութիւն, այն լոյսր՝ ուսկից գրկուողը՝ « *կոյր է մօտ* » կըսէր մեր սուրբ Վարդապետներէն մէկը:

Եւ թէ որ Սէր ըլլայ՝ ինչպէս կրնամք չզգալ, չտրտմիլ ու չվառուիլ Փենեհեզեան սուրբ նախանձու ընդդէմ այն Հայուն կամ Հայոց՝ որ ցաւալի կուրութեամբ մը կջանան բանիւք կամ գործով ազգային սուրբ Եկեղեցւոյն, Ազգին շահաւոր գործոյ մը, ազգաշահ եւ ազգահաստատ *Հիմնարկութեան* մը դէմ գործել ու կործանմանը աշխատիլ, յարդարել կամ անամօթաբար ապատել.....

Երբ որ Սէր չըլլայ՝ ոճն ինչ ատիճանի բարեկարգութիւնը եռ եռ կերթայ, կաղաւաղի եւ անդարման կըլլայ... եւ ո՛րչափ կդիւրանայ՝ երբ մէյմը այս սուրբ առաքինութիւնը մեր մէջը հաստատի: Վասնզի խաւար է Աստուածը, ու Սէրը՝ լոյս երկնաւոր՝ որ արեւու վրայի մառախլապատ ամպերը կպատռէ կփարատէ: Զունչմէ ուրեմն պէտ եւ անհրաժեշտ պէտ մը — կրսեմ — ներքին եւ արտաքին փոփոխութեան: Ա՛լ ժամանակը չէ որ մեր ազգային սուրբ Եկեղեցին ու ազգային Ընկերութիւնը այս բոլոր աշխարհ ծաւալող հրաստաբեր լոյսը վայելեն:

Այո՛, արդ ժամանակն է: Զայն կցուցընեն ոչ միայն մեր խեղճութիւնները, հապա նաեւ նոյն իսկ աստուածային Աջը՝ որ մեր կարօտութեանցն համեմատ՝ լրացուցող մը կշնորհէ արդ ու դարմանող՝ յաստուածային Անձն այն վեհագոյն Հովուին, յորոյ ձեռս յանձն առնէ արդ զբախտ բոլոր Հայաստանեայց: Այն օրհնեալ Ձեռուըներ չունին ցուպ արհայասաստ բռնութեան, ինչպէս նաեւ այն օծեալ Գլուխը՝ ոչ թէ արհայապանծ ունայնափայլ թագով մը կպսակուի: Այլ իրեն Ձեռն է հովուական սիրակցորդ ցուպն առաջնորդելու իմաստութեան եւ գիտութեան՝ զոր Մովսէսի յաջորդացը կպարգեւէ Աստուած: Հապա ուրեմն այն Գաւազանին եռեւէն երթամք ո՛ւ Հայկազունք, եւ այն աստուածընտիր Գլխոյն: Վասնզի այն Գաւազանը կարող է մեր դիմացի Կարմիր ծովերը զարնել ցամքեցընել ու մեզի համբայ բանալ, ու մեր չորս դարու անապատի պանդխտութեան ապառաժներէն անոյշ ջուր բղխեցընել, ինչպէս նաեւ այն աստուածապսակ Գլուխը՝ կարող է մեզ Սիւնէական լուսաւոր ու ազգաշահ պատգամներ երկնքէն իջեցընել:

ՖՈՒԱՏ ՓԱՇԱ.

Յուլիսի թերթին մէջ հրատարակած կենսագրական տեղեկութեանց առթիւը՝ Վսեմափայլ Ֆուատ Փաշայն, հետեւեալ գրած բղթովը իւր շնորհակալութիւնը մեզ կյայտնէ :

Կիւրեմք հաղորդել զայն ընթերցողաց մերոց, որովհետեւ անշուշտ եմք որ ուրախութեամբ պիտի տեսնեն իսմա գիտաստիս հզօր պաշտպանութեան Վսեմափայլ Փաշային, ինչպես նաեւ եռանդուն խնամոց առատագութ Սուլթանին՝ որ այսմեր Հայկազեան վարժարանիս վրայ կիովանանաւ :

Փարիզ, 2 սեպտեմբեր 1858.

Տեարք,

Ընկալայ հաճութեամբ եւ ընթերցայ ցանկութեամբ այն ծանօթութիւնը՝ զոր դուք հաճեր եիք նուիրել ինձ ձեր պիտանի Օրագրին մէջ : Իմ վրաս գրածնիդ շատ ողոքանօք են համեմատութեամբ այն նուաստ ծառայութեանցը՝ զոր ես կարացի մատուցանել քաղաքակրթութեան եւ յառաջադիմութեան ամենամեծ խնդրոցը :

Օրինաւոր շահուց եւ պատուաւոր հասարակութեանց պաշտպանութիւնը հակառակ կետ է այն քաղաքականութեան՝ որոյ անդամ ըլլալու պատիւն ունիմ: Զեմղանդաղիր բնաւ այս ակնածելի շահուց կարգը դասելու նաեւ ձեր կրօնակցաց շահը, որ Օսմանեան պետութեան վրանին ունեցած վստահութիւնը արդարացունելու կաշխատին :

Շարունակեցէք, Տեարք, ձեր խնամոցը յանձնուած մատաղերամ մանկտին, պարտուց եւ գիտութեանց սիրոյն մէջ մեծցընելու : Կրնաք ապահով ըլլալ՝ որ Վ. Սուլթանին կառավարութիւնը իր կողմանէ պիտի շարունակէ ձեր աշխատութիւնը հայրական սիրով նկատելու, եւ թէ ես՝ ինչպես մինչեւ հիմա՝ այսուհետեւ ալ պիտի ուշադիր ըլլամ ձեր աշխատութիւնն իրեն նշանակելու, եւ արծանի եղած թեւարկութեամբ անոնց նպաստելու :

Ընդունեցէք, Դերապետիւ Վարդապետք, իմ բարձր ակնածութեանս հաւաստիքը :

ՖՈՒԱՏ.

Առ Գերապատիւ Տեառս
Ամբրոսիոս Վ. եւ Խորէն Վ. Գալֆայեանս
Վերատեսուչս Հայկազեան Վարժարանիս.
ՓԱՐԻԶ.

FUAD PACHA.

A l'occasion de la notice biographique que nous avons publiée dans notre numéro de juillet, S. E. Fuad Pacha a eu la bonté de nous témoigner ses remercîments par la lettre ci-jointe.

Nous sommes heureux de pouvoir en donner connaissance à nos lecteurs, persuadé qu'ils y verront avec joie l'assurance de la haute protection de Son Excellence, aussi bien que de la vive sollicitude dont notre collége et la nation arménienne tout entière sont l'objet de la part de S. M. le Sultan.

Paris, le 2 septembre 1858.

Messieurs,

J'ai reçu avec plaisir et parcouru avec intérêt la notice que vous avez bien voulu me consacrer dans votre intéressant recueil. Les termes dont vous vous êtes servis à mon égard sont beaucoup trop flatteurs pour les humbles services que j'ai pu rendre à la grande cause de la civilisation et du progrès.

La protection des intérêts légitimes et des communautés honnêtes forme le point essentiel de la politique à laquelle j'ai l'honneur d'être associé : au rang de ces intérêts respectables, je n'hésite pas à placer celui de vos coreligionnaires qui travaillent à justifier la confiance du gouvernement ottoman.

Continuez, Messieurs, à élever les jeunes élèves confiés à vos soins dans l'amour du devoir et de la science : vous pouvez être convaincus que le gouvernement de S. M. I. le Sultan continuera de son côté à suivre vos travaux avec une sollicitude paternelle, et que je serai toujours, comme je l'ai été jusqu'ici, attentif à les lui signaler et à appeler sur eux les suffrages mérités.

Recevez, Révérends Pères, les assurances de ma haute considération.

FUAD.

Aux Très-Révérends Pères,
Ambroise et Corène Calfa,
Directeurs du Collége national arménien,
PARIS.

ԽԱԼԻՊԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԻԹԷՈԴՈՍԻԱ.

Մօտերս իմաստասէր ջանիւք Գեր. Գաբրիէլի Վարդապետի Այվազեան, եւ ազգասէր ուխեհանձն առատաձեռնութեամբ նոր Նախիջեւանցի Խալիպեան Տէր Յարութիւնին իթէոդոսիա (Քեֆէ) բացուելիք ուսումնարանին բերկրալի լուրն արդէն առեր եւ ուրախացած են ազգայինք. մեք ուրիշ առթի բողոով Խալիպեան վեհամիտ ազգային Բարերարին կենսագրութիւնն ու կենդանագրոյն հրատարակումը, առայժմ իւր հիմնած Ուսումնարանին կայսերական հաստատութեան թուղթն ու կանոնները ծանուցանեմք :

ԱՌ ՏԵՂԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ՎԻՃ. ՀԱՅՈՑ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԵՒ ՊԵՍԱՐԱԲԻՈՅ.

Բարեբախտ գտեալ մատուցանել խոնարհաբար առ Ինքնակալն զառաջարկութիւն Գեր. Տէրութեանդ որ յաղագս կառուցանելոյ իթէոդոսիա զառանձինն Ուսումնարան վասն պատանեաց ազգին Հայոց, ընդ նմին արկի ընդ ակնարկութեամբ Ն. Վեհափառութեան զգծագրեալն յՈստիկանաբանի ներքին գործոց, համաձայնութեամբ Ոստիկանաց՝ Ս.րտաքին գործոց. Ազգայնոյ լուսաւորութեան եւ հանրական Կուսակալին նորոյն Ռուսիոյ եւ Պեսարապիոյ, եւ գիմմնեալն գլխաւորապես ի վերայ առաջարկելոցն ինձ Ձեօք՝ միջոցեւ աստիճեբրպուրկ եիք խելամտութեանց, գնկարագիր կանոնաց Ուսումնարանին այնորիկ :

Վեհափառ Ինքնակալին բարեհաճեալ ընդ Ձեր առաջադրութիւն՝ այնու զի Ուսումնարանն բացցի եւ յառաջասցի ըստ կանոնացն այնոցիկ արժանաւորելոց հաւանութեան Ն. Վեհափառութեան, պատուիրեաց ինձ առաքել յայնցանէ մին մի օրինակս առ Ոստիկանն Ազգայնոյ լուսաւորութեան, առ հանրական Կուսակալ Կոմսն Սբրոկոնով եւ առ Ձեզ, առ պարտուպատշաճն տնօրինութիւն :

Զայսպիսւոյ Կայսերական կամեցողութենէ տալով Ձերումդ Գեր. Տէրութեան տեղեկութիւն, յարելով իսոյն եւ զօրինակ կանոնացն իվեր այսր յիշատակելոց, հարկ համարիմ աղաչել զի իդեպ ժամուծանուսջիք Ոստիկանաբանիս Ներքին Գործոց գկարգադրութիւնսն զորս առնիցէք վասն կառուցման Ուսումնարանին այնորիկ :

Ոստիկան Ներքին գործոց,

Ձեռնագրեալ. Ս. ԼԱՆՍԿՈՅ.

Հաւաստեալ. Կոմս ՍԻՎԵՐՍ.

ÉCOLE KHALIBIAN A THÉODOSIE.

Nos compatriote ont déjà eu la bonne nouvelle de la fondation d'une école à Théodosie, par les soins éclairés du très-honoré Archimandrite Gabriel Aïvazovsky, et par le patriotisme et la générosité magnanime de M. Haroutioun Khalibian de Nakhitchévan. Cette nouvelle a été pour tous une source de joie. Nous remettons à une autre occasion la publication de la biographie et du portrait de l'illustre bienfaiteur national; nous nous contentons aujourd'hui de donner les règlements de l'école et de l'acte par laquelle S. M. l'empereur en autorise la fondation.

A MONSIEUR LE DIOCÉSAIN ARMÉNIEN DE NAKHITCHEVAN ET DE BESSARABIE.

J'ai été heureux de présenter humblement à S. M. l'Empereur la demande de Votre Grandeur au sujet de la fondation à Théodosie d'une école pour les enfants de la nation arménienne; j'ai soumis en même temps à l'examen de Sa Majesté les renseignements du ministère de l'Intérieur concordant de tout point avec ceux des ministres des Affaires étrangères, de l'Instruction nationale et aussi du Gouverneur général de la province de la nouvelle Russie et de Bessarabie, et en outre les règlements de cette Ecole établis généralement sur ma proposition et avec votre concours, lors de votre séjour ici à Saint-Pétersbourg.

S. M. l'Empereur, dans son auguste bonté, a daigné agréer votre demande, à condition que cette école sera ouverte et subsistera conformément aux règlements que Sa Majesté a jugés dignes de son approbation. Sa Majesté m'a ordonné d'envoyer un exemplaire de ces règlements au ministre de l'Instruction nationale, au Gouverneur général comte Strogonoff et à vous, afin que tout marche pour le mieux.

En faisant part à Votre Révérence des volontés impériales et en y joignant la copie des règlements susmentionnés, je crois devoir vous prier de communiquer en temps convenable au ministère de l'Intérieur les arrangements que vous prendrez pour la construction de cette école.

Le Ministre de l'Intérieur,

Signé : S. LANSKOY.

Contre-signé : Comte SIVERS.

ԿԱՆՈՆՔ ՀԱՅԿԱԶԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻՆ
ՈՐ ԻԹԷՈԴՈՍԻԱ ՔԱՂԱՔԻ

(ԻՏԱՒՐԻԿԵԱՆ ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԵԱՆ.)

Ուսումնարանն այն պարտի լինել մասնական վարժոց սահմանեալ իդաստիարակութիւն հայկազն պատանեաց՝ առանց խտրելոյ գտեղի ծննդեան եւ զծագումն սերնդեան նոցա :

Ուսումնարան անդր մարթին ընդունելի լինել ոչ միայն Հայք հպատակեալք լուսաւորչական եկեղեցւոյ, այլ եւ այնոքիկ իՀայկազանց որ զհետ երթայցեն հռովմէական եւ բողոքական եկեղեցեաց :— Սոքին եւս յամենայնի հպատակին կարգաց սահմանելոց յՈւսումնարանի անդ, բայց ոչ բռնադատեսցին երբէք ունկնդիր լինել դասուց կրօնական գիտութեան տուելոց ըստ կանոնաց լուսաւորչական եկեղեցւոյ :

Ուսումնարանն այն ազատ մնալով յանբնդմիջ տեսչութենէ Ոստիկանին Ազգային լուսաւորութեան, պարտի կալ եւ մնալ ընդ անձնական առաջնորդութեամբ եւ վերատեսչութեամբ Գաբրիելի Վարդապետի Այվազեան, եւ յետ նորա Առաջնորդաց վիճակին Հայոց Նախիջեւանի եւ Պեսարաբիոյ :

Առաջնորդի Ուսումնարանին սեպհական գործ է կարգել ուսուցիչս եւ ընտրութիւն առնել գրենոյ եւ ոճոյ դասախօսութեանց. սակայն զհետ երթալով կանոնին առ հասարակ ընդունելի եղելոյ սակս վարժարանաց որ չիցեն ընդ տեսչութեամբ Ոստիկանին Ազգայնոյ լուսաւորութեան : Առաջնորդին պարտք են տալ ամ ըստ ամէ առ Խնամակալն Ուսումնական նահանգին Օտեսսա քաղաքի տեղեկութիւնս գվարժապետաց, գրոյց աշակերտաց եւ զընթացից ուսման :

Հրամայեալ է Ուսումնարանին բանալ զՏպագրատուն եւ հրատարակել զՕրագիր ինայ, իգադղիացի եւ իռուս բարբառս :

Գննութիւն Օրագրոյն, որպէս եւ մատենից որ բերիցին իպէտս Ուսումնարանին յօտար պետութեանց, ըստ հանրական կանոնաց անկէ գրաքննական Ատենին Օտեսսայի՝ մինչչեւ գտեալ իցեն հնարք հաստատելոյ զգրաքննութիւն անդէն իսկ իԹեոդոսիա. բայց գննութիւն օրագրական յօդուածոց, որպէս եւ ամենայն գրենոյ որ իցեն ինայ լեզու՝ հաւատացեալ լինի Այվազեան Վարդապետին, որ միայն է առ այն պատասխանատու :

Ուսումնարանի անդ հրահանգին մանկունք

RÈGLEMENTS DE L'ÉCOLE ARMÉNIENNE
FONDÉE DANS LA VILLE DE THÉODOSIE

(PROVINCE DE TAURIS.)

Cette école est destinée particulièrement à l'éducation des enfants arméniens, sans distinction de pays et d'origine.

Dans cet établissement peuvent être admis non-seulement les Arméniens soumis à l'Eglise grégorienne, mais aussi ceux qui appartiennent à l'Eglise romaine et à l'Eglise protestante. — Ceux qui se rattachent à ces deux dernières catégories doivent se conformer en tout aux règlements de l'Ecole, mais ne peuvent être forcés de suivre les cours de l'enseignement religieux fait suivant les dogmes de l'Eglise grégorienne.

Cette Ecole, étant indépendante de la surveillance immédiate du Ministre de l'Instruction nationale, reste à la direction et sous l'inspection personnelle de l'archimandrite Gabriel Aïvazovsky, et après lui, des diocésains de Nakhitchévan et de Bessarabie.

Le Directeur de l'Ecole nomme les professeurs, fait le choix des livres et organise les cours. Cependant, d'après les règles généralement suivies pour les établissements qui ne relèvent pas directement du Ministre de l'Instruction nationale, le Directeur est tenu de donner tous les ans à l'Inspecteur de la province d'Odessa des renseignements sur les professeurs, sur le nombre des élèves et sur le nombre de l'enseignement.

L'Ecole est autorisée à posséder une imprimerie et à publier un journal arménien-français-russe.

L'examen du journal et des livres importés des pays étrangers pour le besoin de l'Ecole et du ressort, suivera les lois générales de l'Empire, de la censure d'Odessa, en tant qu'une censure n'aura pas été établie à Théodosie. Toutefois, l'examen de la partie arménienne, en ce qui concerne les livres aussi bien que les articles du journal, est confié à l'archimandrite Gabriel Aïvazovsky, qui en reste seul responsable.

Dans cette Ecole, les élèves apprennent les langues

իլեզուս Ռուսաց, Դաղղիացւոց, Հայոց եւ Տաճկաց. նոյնպես եւ յայնոսիկ ուսմունս որ բովանդակին առ հասարակ իրաւանգս մարգարանաց կամ վարժոցաց (ժիմնազ), եւ կամ կարեւոր են հետամուտ եղելոցն արուեստի վաճառականութեան:

Ամենայն աշակերտաց Ուսումնարանին պարտք են ուսանել զուսմունսն որ բովանդակին իսահմանի անդ մարգական հրահանգաց:

Հայկազունք հպատակեալք պետութեան Ռուսաց չսահպին ուսանել զտաճիկ լեզու, եւ ոչ Հայկազունք հպատակք Օսմանեանց՝ ուսանել զռուս լեզու:

Ընթացք ուսման բաշխին իվեց դասարանս:

Դասախօսութիւնքն լինին իհայ բարբառ, եւ ըստ մասին՝ իռուս եւ իգաղղիական լեզուս:

Աշակերտք բաժանին իլիաքոշակս, այսինքն իհատուցողս ամբողջ ծոշակի, եւ իկիսաքոշակս եւ իձրիաւարժս. բայց ամենեցուն եւս բնակութիւն պարտի յուսումնարանին լինել:

Թիւ բազմութեան աշակերտաց սահմանի ըստ չափու ընդարձակութեան ուսումնարանին, եւ ըստ հասիցն որովք կերակրեսցի:

Ուսումնական մասինն տեսչութիւն ի ընդ ձեռամբ ժողովոյ՝ զոր կազմեն վերատեսուչք Ուսումնարանին եւ վարժապետք ինմանէ ընտրեալք եւ որոշեալք:

Տնտեսական մասն Ուսումնարանին ի իձեռն առանձինն խորհրդարանի՝ որոյ գահերէց ի վերատեսուչն, եւ անդամք անձինք վեց. չորք ինոցանէ ընտրին իպատուաւոր ժողովրդականաց քաղաքին Թեոդոսիոյ:

Հիմնադրի Ուսումնարանին Գաբրիելի վարդապետի Այվազեան՝ իբրեւ Տեղակալի Առաջնորդութեան վիճակին Հայոց Նախիջեւանի եւ Պեսարապիոյ՝ յանձն ի գատանել զմասն ինչ դրամագլխոց եւ եկամտից եկեղեցեաց այնր վիճակի իշինուած եւ իպահպանութիւն Ուսումնարանին: Եւ զգումարն որ պիտոյ իցէ առ լսոյն՝ ճշդիւ պարտ ի սահմանել եւ որոշել վասն տարեկան ծախուց, յետ իյայտ ածելոյ զամենայն զգլուխս եկեղեցական դրամոց եւ զեկամտից վիճակին:

Բայց յայնմանէ, ընդ հնարս պահպանութեան Ուսումնարանին պարտ ի համարել եւ զկամաւոր նուէրս ժողովրդոց:

Ոսիկան Ներիկն գործոց,

Ձեռնագրեալ. Ս. ԼԱՆՍԿՈՅ.

Հաւաստեալ. Կոմս ՍԻՎԵՐՍ.

russe, française, arménienne et turque? ainsi que les sciences enseignées dans les gymnases? ou les connaissances nécessaires au commerce.

Tous les élèves de l'Ecole doivent suivre les cours exigés par les règlements qui concernent les études élémentaires.

Les Arméniens sujets russes ne sont pas tenus d'apprendre la langue turque; de même les Arméniens sujets turcs peuvent être dispensés d'apprendre la langue russe.

L'enseignement se divise en six classes.

Les cours se font en général en langue arménienne et une partie en langue russe et en langue française.

Les élèves sont divisés en pensionnaires, demi-pensionnaires et boursiers; tous demeurent dans l'établissement.

Le nombre des élèves est proportionné à l'étendue et aux revenus de l'établissement.

La direction de l'enseignement est entre les mains d'un Conseil composé du Directeur de l'Ecole et de ceux des professeurs choisis par lui.

La partie administrative est confiée à un Conseil présidé par le Directeur et composé de six membres. Quatre sont élus parmi les notables de la ville de Théodosie.

Le fondateur de l'Ecole, l'archimandrite Gabriel Aïvazovsky, en sa qualité de diocésain arménien de Bessarabie et de Nakitchévan, est autorisé à employer une partie des capitaux et des revenus des églises de ce diocèse à la fondation et à l'entretien de l'École. Il est tenu de fixer d'une manière précise la somme à prélever sur ces capitaux et ces revenus pour les dépenses annuelles de l'École.

En outre, on peut tenir compte, comme moyen d'entretien, des dons volontaires du peuple.

Le Ministre de l'Intérieur,

Signé : S. LANSKOY.

Contre-signé : Comte SIVERS.

ՕՍՏԻԿԱՆԱՐԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՑ.

Բաժին հոգեւորական գործոց այլազգաց.

ՀԱՏԱՏ Բ. ԴՐԱՍԵՂԱՆ Ա (9 ՅՈՒԼԻՍԻ 1858) Թ. 110.

ըստ հրամանի վեհափառ. իմպեռատորին.

ՅԱՂԱԳՍ ԿԱՌՈՒՑԱՆԵԼՈՑ ԻՐԵՆԴՈՍԻՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՆՁԻՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ՀԱՅՈՑ.

Իրնագրին ձեռամբ Տէառն Ոստիկանի Ներքին գործոց գրեալ է. « Ինքնակալ Կայսրն հաճեցաւ յակն արկանել. »

Ոստիկանի ներքին գործոց

Ձեռնագրեալ, Ս. ԼԱՆՍԿՈՅ.

Հաւաստեալ, Կոմս ՍԻՎԵՐՍ.

14 յուլիսի 1858, ի Փեթերբուրգ:

MINISTÈRE DE L'INTÉRIEUR.

Division des affaires religieuses des nations hétérodoxes.

IIe SECTION, Ier BUREAU (9 JUILLET 1858) N° 110.

Par ordre de S. M. l'Empereur.

POUR LA FONDATION DANS LA VILLE DE THÉODOSIE D'UNE ÉCOLE ARMÉNIENNE.

L'original porte, écrit de la main de M. le ministre de l'Intérieur : « L'Empereur a daigné examiner. »

Le Ministre de l'Intérieur,

Signé : S. LANSKOY.

Contre-signé : Comte SIVERS.

4 juillet 1858, à Saint-Pétersbourg.

ԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑ ՅԵԱՇ

Օգոստոսի 17ին Նաշի ազգային դպրոցը մեծ յաջողութեամբ տարեկան քննութիւնները կատարեր է, ներկայութեամբ ազգային եւ տեղւոյն իշխանացը: Ամենքն առհասարակ մեծապես գոհ են եղեր եւ գարմացեր աշակերտաց ցուցուցած յառաջադիմութեանը եւ վարժապետաց խնամոցն եւ ջանիցը վրայ: Կրօնի եւ ուսմանց Ոստիկանն ալ իւր մեծ գոհութիւնը յայտնելու համար հետեւեալ պատուական վկայագիրը գրեր է առ իւրաքանչիւր յարգելի վարժապետս, զոր մեր ազնիւ նախկին աշակերտն եւ դպրակից Պ. Սողոմոն Դրանխուեան կնաղորդէ մեզ, եւ զոր սիրով կհրատարակեմք իվառս եւ իքաջալեր այն ազգասէր յարգելեաց, փափագելով որ իրենց գեղեցիկ օրինակը վառե նաեւ այլոց վարժապետաց եռանդը ի նմանատիպ նմանութիւն ազգասէր ջանից եւ փութոյ:

ԴՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆ ԿՐՕՆԻ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱՑ ԴՊՐՈՒԹԵՆՆ ԱՒՐ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԻՄԱՑՐԱՔԱՂՔԻՆ.

« Այս գործակալութեան պաշտօնեայն Տօքթօր Պ. Անտօն Վեյինի իրեն վկայութեամբը յայտ կընէ թէ ներկայ տարւոյս Հայոց վարժարանին երկրորդ վեցամսեայ, այսինքն՝ ամարային քննութեան վախճանը խիստ գոհացուցիչ եղեւ. որով Գործակալութիւնը առոյգ ըլլալով որ այսպիսի բարի վախճան մը միայն այն Հոգաբարձութեան անխոնջ խնամոց արգասիքն է, ուստի մեկ կողմանէ բոլոր արդիւնքը յարգելոց փափաքով՝ իւր կատարեալ շնորհակալութիւնը կյայտնէ այն Հոգաբարձութեան, յոյսալով որ այսուհետեւ եւս առաւել սիրտ ջանայ այս ուսումնարանիս արդի ժամանակին եւ պարագային պահանջած կանոնաւոր ընթացքն ալ տալ, որպէսզի արժանի ըլլայ Տէրութեան բարերարութեանը եւ պատուոյն Հասարակութեան՝ որոյ շահերը իրեն ձեռքը յանձներ է. ուրիշ կողմանէ ալ ասոր հետ դրկած նրուագարտակներովը նոյնպէս իւր շնորհակալութիւնը կմատուցանէ Պ. վարժապետաց նմին Վարժարանի. ինչպէս՝ առ. Գամինարն Խաչերես Գարագաշեան, Յովհաննես Գալստեան եւ առ. Բիդարն Լուսիկ Սրմագաշեան՝ որ նոյնպես այս բարի վախճանը ստանալու ջանք ըրեր է, եւ կվնդրէ գՀոգաբարձութիւնը որ այս նրուագարտակները յիշեալ անձանց ձեռքը տրուին » :

ԱՒ ԽՈՐԻՆ Վ. ԽՈՐԽՈՐՈՒՆԻՆ.

Հետեւեալ նամակը իլոյս կընծայեմք՝ ըստ խընդրոյ առաւել նամակագրին՝ քան յողոքաւոր գովեստից գովողին: Սրտի ազնիւ զգացմունքները արժանի են որ յամենեցուն խրախուսին:

Գերապատիւ Տէր,

Ներողամիտ եղէք երիտասարդի մը որ թէպէտ անձամբ Ձեզի ծանօթ ըլլաղու պատիւ չունի, բայց դրդեալ յերախտագիտութենէ, որ դուք ածածեցիք իրեն հոգւոյն մէջ, Ձեր Ազգասիրական յորդածներովը Մասեաց Աղաւնոյ էջերուն մէջ, իրեն անհրաժեշտ պարտք կհամարի իւր պարտուպատճառ յարգանքը Ձեզ նուիրել: Կարելի է արդեօք որ մեկը կարդայ այն սխանչելանիւս տողերը, որով մեր նախնեաց փառքը մեզի կյիշեցընեն, եւ ազգասիրութեան հոգւով չտոչորի:

Կարելի է արդեօք որ Հայ մը Ձեր խաղցր ճառին վրայ երգուած ազատր Հայաստանին ողբերը լսէ, ու առ հարկի ցամաք աչուրներէն դէպ իներս ծորած արի արտասուաց հեղեղով չողողի: Ո՜հ, Մասեաց մուսային նուիրական ճառը բան է որ Ձեր ձեռին է, գոնէ Մայր Հայաստանէն բաժնուած օսար եզերաց վրայ մնացած որդիս, սա միխթարութիւնն ունիմ որ, մեր սիրելի Մօր դեռ ողջ ըլլալուն խաղցր լուրերը Ձեզմէ կրնդունիմ, եւ կուլամ սիրելի Ծնողէս հեռու մնալուս համար միայն, եւ ոչ թէ անմայր որբ ըլլալուս համար, ինչպէս իզուր ջանացին շահերը զմեզ համոզել: Օրհնեմ այն ձայնը որ Ազգայնոց կկարդայ « Սէր եւ Հայրենասիրութիւն, » եւ կրկին օրհնեմ երբ ազգայնոց եւ օսարաց միանգամայն կաղաղակէ « ՕՐՀՆԵԱԼ ՈՐ ՍԻՐԵՆ ՁԷՔԴՆ ՀԱՅԱՍՏԱՆ » :

Ունիմք գոնէ սա մխիթարութիւնը որ Սենեայի եզերաց վրայ բնակող օսարներ կան որ ճանչցան մեր անհատն ծագումը մեր կրօնից Սրբութիւնը, ու մեր նախնեաց փառքը, եւ ժամանակի անհաճոյ գետով տարուած օսար ափանց վրայ ձեռնդ հայոց թշուառութեանը եղան ողբակից: Ցոյս խաղցր է մեզ լսել մեր Սիրելոյն լուրերը: Երգեցէք առ միտս, Քաջդ Խորխոռնի, ինչ որ Մուսայդ Ձեզ կսզդէ. եւ բարեհաճեցէք ընդունել ինձմէ եւ իմ զգացմունքս ուենցող համազգեաց երախտապարտ շնորհակալութեանց նուէրը:

Բարեպաշտ առիթս կաղաչեմ Ձեզ իմ անկեղծ երախտագիտութեան հաւատացիս նուիրել Ձեր սիրասուն եղբօրդ Գերապատիւ Ամբրոսիոս վարդապետին իմ բազմերախս ուսուցչիս, ուսկից ուսման եւ բարոյականի առած սկզբունքներս ջանացի ըստ կարի ապարդիւն չընել:

Խնդրելով որ Ձեր Մասեաց պատուական տղերուն մէջ տեղ տաք այս առհասարակ գրութեանս, մնամ միտս

Ձեր եւ անոր անգին կենացը միտս բարեմաղթու

Ամենախոնարհ ծառայ

ՅԱՐՈՒԹԻՒՆ Մ. ՄՈՒՐԱՏԵԱՆ.

Կոստանդնուպոլիս 27 Սեպտեմբեր 1858:

ԱՐՇԱԼՈՒՍՈՑ 579 թուէն իմացանք որ Աղաւնւոյն *Տէր* եւ *Աղա* բառերուն գործածութեանը վրայ հրատարակած ազգային լեզուագիտական հատուածին դէմ յօդուած մը տպուեր է Մեղու ըստ կիսամսեայ հանդիսին մէջ իպաշտպանութիւն *Աղա* այլազգի բառին:

Արշալուսոյ ազգասէր եւ հայագէտ խմբագրապետը՝ մեր լեզուին անխառն յստակութեանը վրայ ունեցած ամենագովելի նախանձէն շարժած՝ վերոյիշեալ թուոյն մէջը նոյն յօդուածին պատասխանը տուած է: Մեր առաջարկութեանը իրեն պես բանիբուն պաշտպան եւ ջատագով ունենալով, աւելորդ կհամարիմք առ այժմ մեր կողմանէ ամենայն խորհրդածութիւն. մանաւանդ ալ որ խնդութեամբ կտեսնեմք որ ամենայն անկողմնասէր եւ մտացի Հայք եւ հայագէտ Եւրոպացիք՝ մեր առաջարկութեան իրաւացի փաստերուն խելամուտ եղան եւ նախապաշարումը մէկդի դնելով սկսան իգործ ածել գայն իրենց գրութեանցը մէջ: — Ահաւասիկ Արշալուսոյ պատուական պատասխանը:

ՔԱՆԻ ՄԸ ԽՕՍՔ

« *Տէր եւ Աղա բառից գործածութեանը վրայօք.*

« *Արշալուսոյ* 574 թուովը, մեր յարգոյ ընթերցողաց աչաց առջեւ դրինք պատուական յօդուած մը, գոր *Մասեաց Աղաւնիին* հրատարակած էր ապրիլի ամսատետրին մէջ իմասին գործածութեան *Տէր* բառին:

« Թեպետ նոյն առթիւ, քանի մը խօսքով, մեր կարծիքը չյայտնեցինք այս խնդրոյն վրայօք, սակայն չէր կրնար տարակոյս մը ըլլալ թէ մեր կողմանէ խիստ գոհ եմք որ *Աղա* այլազգի բառին գործածութիւնը բոլորովին խափանուելով, անոր փոխարէն մեր ազգային *Տէր* բառը եւ հայացեալ *Պարոն* բառը գործածիւն: Քանզի նոյն յօդուածը հրատարակելեն ետեւ, սկսանք աշխատիլ, ըստ մերոյ տկար կարեաց, *Տէր* պատուական բառը՝ *Աղա* բառին տեղ գործածելով միշտ, ազգասէր հասարակութեան ակնջին ընտելացընել այս ձայնը, որ թեպետ առջի բերանը կերպիւ մը խորթ կերեւի, եւ այս ալ բնական է, ըստ որում զարերէ իվեր հաստատեալ սովորութիւնը անհնար է որ մեկենիմեկ վերնայ, սակայն եթէ ազգասիրաց եւ գրագիտաց գործակցութիւնը, նա մանաւանդ ազգային հոգեւորական եւ աշխարհական պաշտօնեաբաց օգնութիւնը ամենայն զգուշութեամբ իգործ դրուելու ըլլայ, տարակոյս չկայ որ նախ՝ նամակագրութեանց եւ ուրիշ պաշտօնական գրուածոց մէջ գործածուելով, սակաւ առ սակաւ ժամանակին հզօր օժանդակութեամբը, խօսակցութեանց մէջ եւս կընդհանուի այս բարի սովորութիւնը. փոխանակ խորթ գալու մեր ականջին, խիստ գեղեցիկ եւ ազնիւ պիտի գտնեմք զ*Տէր* բառը, եւ *աղա* բառին գործածութիւնը բոլորովին պիտի մերժուի. ինչպես Հայաստանի մեկ մասին մէջ եւ Հնդկաստանի Հայ բնակչաց մէջ չգործածուիր այս օտարազգի մակդիրը:

« Ցայտնի է որ ժամանակէ մը իվեր մեծ եւ պզտիկ ամեն ուսումնասիրութիւնք, ձեռնարկեն եկածին չափ, գոն կգործեն թէ խօսակցութեան եւ թէ գրութեանց մէջ մարդուր աշխարհաբար լեզու մը գործածել, առանց օտար բառեր խառնելու: Ուստի *Մասեաց Աղաւնւոյն* առաջարկութիւնը եւ մեր թախանձանքն ալ ուրիշ բան մը չէ, բայց միայն բոլոր ազգասիրաց եւ ուսումնասիրաց՝ ըստ այսմ մասին ունեցած բաղձանաց գործադրութեանը նպաստամատոյց ըլլալ:

Կոստանդնուպոլսոյ *Մեղու* անուն կիսամսեայ պատուական հանդէսը, յունիսի 15 տետրակին մէջ յօդուած մը կհրատարակէ այս խնդրոյն վրայօք, եւ քանի մը կարծեցեալ դժուարութիւններ յառաջ բերելով, կըմերժէ *Տէր* բառին գործածութիւնը *Աղա* բառին տեղ:

« Այս դժուարութիւնները, ըստ մեր կարծեաց, հիմնաւոր չեն. ուստի դիւրին է մեզ ներքել զանոնք հաստատուն փաստերով: Նախ՝ կըսէ թէ *Տէր* պատուանունը եկեղեցականաց յատկացեալ ըլլալով, անոնց հետ գրեթէ կոուիլ հարկ պիտի ըլլայ: Բայց մենք կպատասխանեմք թէ *Տէր* մակդիրը մեր մէջը միայն քահանայից յատկացեալ է եւ ոչ բոլոր եկեղեցականաց: Եւ որովհետեւ քահանայք աշխարհականներին

աւելի ձեզ ենք եւ խոնարհ սրտիւ, կամ այնպես ըլլայ կպարտաւորին, ուստի չեմք կարծեր թէ յիշեալ պատահանուն միայն իրենց համար պահելու մտօք, այս լուսաւորեալ դարուս մէջ, կրօնական պաշարումը մեզի դէմ հանել ուզեն կամ կարող ըլլան հանելու: Երկրորդ՝ *Մեղուն* կըսէ թէ *Տէր* բառը իմնումն իշխանութիւն մը ունեցօղի կտրուեր մեր ազգին մէջ, եւ այլն: Դարձեալ մեք կպատասխանենք թէ տաճկերենի մէջ եւս, *Աղա* բառը նոյն իշխանական նշանակութեամբ ալ կգործածուի միշտ, ցայսօր, օրինակի համար՝ Պոնովայի աղան, Մենիմենի աղան, Գօլ աղասը, եւ այլն: Նմանապես Կոստանդնուպօլսոյ մեծ եւ պզտիկ գերդաստանաց մէջ. երբ *աղան հոս է, աղան զնաց, աղան եկաւ* որ կըսուի, տանտերը եւ տան հրամանատարը կիմացուի: Իվերայ այսր ամենայնի հասարակ մարդոց ալ, այսինքն այսպիսի հրամանատարութիւն մը չունողի ալ ընդհանրապես *աղա* կըսենք: Եւ մեկը միւսին *տէրս, աղաս* կամ *էֆենտիս* ըսելով, ասկից չնետեւիր թէ մեկը միւսին տէրն է. ինչպես նաեւ մեկնելու ժամանակնիս *ծառայ եմ* ըսելով, ինչպես սովորութիւն է, չիմացուիր թէ ստոգիւ վարձուոր ծառան ենք այն բարեկամին կամ այն յարգոյ անձին՝ ուսկից կզատուիմք: Ուստի անհիմն է *Մեղուին* գրուցածը թէ « Հիմա որ բնաւ մեկը միւսին տէրը չէ, ամենեւին իրաւունք մը չկայ մեկը զմիւսը *Տէր* կանչելու: »

Կտեսնեմք որ մեր յօդուածը շատ պիտի երկարի, եթէ յիշեալ պատուական տետրակին յառաջ բերած միւս դժուարութիւնները ալ մի առ մի ներքելու ելլենք զոր ուրիշ ժամանակ ընելու կխոստանամք, եթէ ընարկը պահանջելու ըլլայ: Միայն կյաւելունք թէ իւր առաջարկած *եղբայր* բառն ալ խիստ վայելուչ կերպիւ կրնայ գործածուիլ իմէջ հաւասար անձանց եւ մտերիմ բարեկամաց. եւ մեզմէ մեծագունին *յարգոյ եղբայր, մեծարգոյ եղբայր, պատուելի եղբայր* շատ վայելուչ է ըսելը: Սակայն հասակաւ եւ պատուով մեզմէ խիստ բարձր անձանց անշուշտ անպատեհ եւ քաղաքավարութեան դէմ է *եղբայր* կոչելը: *Մեղուն* գիտէ թէ Գաղղիոյ մէջ անգամ, այսպիսի հաւասարութիւն յայտնող բառի մը գործածութիւնը, թէ եւ խիստ բրիստոնեավայել է, չկրցաւ երկար ժամանակ դիմանալ:

Ահա այս է մեր կարծիքը *Տէր* բառին վրայօք. եւ ըստ որում մեր գաղափարին վրայ համոզուած ենք խիստ բարեմտութեամբ, վասնորոյ կաղաչեմք սիրով մեր *եղբայր Մեղուն*, որ ինքն ալ *Տէր* բառը գործածելով՝ նպաստամատոյց ըլլայ *Աղաւնւոյն* եւ *Արշալոյսոյ* ազգասիրական ջանիցը ըստ այսմ մասին»:

(ԱՐՇԱԼՈՅՍ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ)

ՏԵՍԱՐԱՆՔ ԵՒՐՈՊԱՅ

ՄԱՏՐԻՏ.

Արդի քաղաքական յուզերուն մէջ մեծ մաս մ'ալ Սպանիոյ փոփոխութիւնները կրնեն. ուստի կարժէ որ հոս համառօտ տեղեկութիւն մը Սպանիացւոց մայրաքաղաքին վրայ տամք, եւ միանգամայն Թագաւորական պալատին ալ պատկերը դնեմք, որ Մատրիտի փառաւորագոյն եւ ամենեն ասելի եւ մտադրութեան արժանի շէնքն է:

ՄԱՏՐԻՏ, որ հին ատենը *Մանդուա Կարպեսանացւոց* կամ *Մայորիտի* կկոչուեր, մայրաքաղաք է Սպանիոյ, Մանսնաձարես գետոյն ձախակողմը, եւ 210,000 բնակիչ ունի: Ամայի անջրդի դաշտի մը մէջ շինուած է Մատրիտ, շրջս դիեն բլուրներով պատած. պարիսպը աղիւսակերտ է եւ 15 դուռ ունի, յորս ամենեն գեղեցիկն է *Ալֆաչա* ըսուածը: Շրջապատն է 17 հազարամեթր (քիլօմեթր), եւ երկայնութիւնը 7 հազարամեթր, որով եւ Սպանիոյ ամենեն մեծ ու ընդարձակ քաղաքն է: Երկու հիւսիսային եւ երկու հարաւային թաղեր բաժնուած է, այն թաղերն ալ հինգ հինգ շրջանակ: Քաղաքին հին մասին տները ցած են, եւ փողոցները նեղ ու ծռումուռ: Նոր մասը որ եւ շատ աւելի մեծ է, կիրթ ախորժակով շինուած է. գեղեցկաշէն ու բարձրակառոյց տներ, յայն, շիտակ ու լաւ յատակած փողոցներ ունի, որոց գլխաւորներն են *Ալֆաչա, Սուրբ Բեռնարդոս* եւ *Յունիֆառալ*: Քառասուն հրապարակաց մէջ ամենեն գեղեցիկներն են *Փլասա-Մայոր* կամ Մեծ Հրապարակ, որ սիւնազարդ բարձրաշէն տներ ունի եւ *Փուէրթա-տէլ-Սօլ* կամ Դուռն Արեգական, որ քաղաքին կեդրոնն է, միանգամայն եւ ամենեն բազմամարդ տեղին: Հասարակաց գբօսարաններուն մէջ անուանիներն են *Փրատոյ* քաղաքին ու *Ռուէն-Ռետիրոյ* ըսուած պալատին մէջտեղը. 2 հազարամեթր երկայնութիւն ունի, այլեւայլ ծառազարդ ճամբաներ բաժնուած է արձաններով ու շատ-

րուածներով զարդարուած, ուր ոտքով, ձիով ու կառքով կքալեցուի. *Ռուեն-Ռեքիրոյի* պարտեզն որ Փրատոյին ծայրն է *Լաս-Տելիսիաս* որ մեկ հազարամեքրեն աւելի երկայնութիւն ունի՝ Մանսանաւարեսի ջրանցքին եզերքը: Եկեղեցիները որ 77ուատ են, ոչ այնչափ մեծութեամբ եւ գեղեցիկ ճարտարապետութեամբ երեւելի են՝ որչափ ճարտարանկար պատկերօք. ամենեն գեղեցկակերտն է Ս. Իսիդորի մատուռը, զոր Փիլիպպոս Դ. թագաւորը շինել տուած է. վայելչաշէն են նաեւ Այցելու կուսանաց, Ս. Եղիսաբեթի եւ Ս. Անտիոքեայ եկեղեցիները:

Հասարակաց շինուածոց մէջ ամենեն մեծակառոյցն է բագաւորական պալատը, որ 1734ին հրդեհեն ետքը բլրակի մը վրայ շինուեցաւ՝ քաղաքին արեւմտակողմը, ինչպես որ պատկերին մէջ կտեսնուի. ձեւը կանոնաւոր քառակուսի է՝ 157 մեթր երկայնութեամբ ու յայնութեամբ, եւ 33 մեթր բարձրութեամբ. մէջն այ մեծաձուն *Մուրիլլոյ*, *Թիցիանոյ*, *Մենկս* եւ ուրիշ պատ-

Մատրիս — Madrid.

կերահանաց նկարներովը զարդարուած: Անկէց ետքը կուգայ *Պուեն-Ռեքիրոյ* պալատը՝ քաղաքին արեւելեան մասին մէջ. *Քալաստոյ տէյու Բօնսէյսաս* կամ Պալատ խորհրդոյ, ուր երկրին գլխաւոր իշխանաւորները կժողովուին. *Տուանա* կամ մարսատունը, *Փանուսէրիա* ուր Պատմութեան ճեմարանը իւր նիստերը կընէ. նոյնպէս Նամականատունը, *Էլ Բորհոյ*, Զինարանը, Փողերանոցը եւ Արքունեաց բանտը:

Ուսումնական շէնքերուն մէջ ամենեն յառաջ պետք է յիշեմք բագաւորական Դրատունը, Պուեն-Ռեքիրոյ պալատին քով վանքի մը մէջ, յորում 200,000 հատոր կայ. յետոյ Ս. Իսիդորոսի գրատունը՝ 50,000 հատորով. բագաւորական բանգարանն որ պատկերի կողմանէ աշխարհիս ամենեն ճոխ ու գեղեցիկ հաւաքումներէն մեկն ունի, Լիկեոն որ տեսակ մը ընկերութիւն է գեղարուեստից եւ *Վիլլա Հերմոզա* ըսուած պալատին մէջ կժողովի. Բնական պատմութեան բագաւորական բանգարանը, որ մանաւանդ օտար հանքածոյից կողմանէ շատ հարուստ է. Դիտանոցը նոր պալատին մէջ շինուած. Բուսաբանական պարտէզը. Ալպալի, Ինֆանթատոյի եւ Մետինա Սելի դպսերուն ճարտարարուեստ հաւաքմունքն ու մանաւանդ Անտոն Փերեզին պատկերադարանը:

Մատրիտոն հասարակաց ուսման տեղերն են՝ համալսարանը, Ս. Իսիդորոսի բագաւորական ուսումնարանը հանդերձ գրատունով. գործնական բժշկութեան, վիրաբուժութեան, բուսաբանութեան, դեղագործութեան եւ հանքաբանութեան համար բագաւորական դպրոցը. ազնուականաց վարժարանը, ճարտարապետաց դպրոցը, բազմարուեստից ճեմարանը, անասնաբուժութեան դպրոցն ու բագաւորական տասնիրեք ճեմարաններն, ինչպես Գեղարուեստից, Իրաւագիտութեան, Սպանիական լեզուի, եւ այլն:

Մատրիտի մէջ կան նաեւ 19 հիւանդանոցք, եւ ամենեն մեծն է *Սան-Ֆեռնանտոյ* որ 1,400 հիւանդ կրնայ առնուլ. 4 որբանոց, 4 թատրոն, գլամարտութեան ամփիթեատրոն մը այնպէս դրան մօտ, որ յաղթական կամարի մը կնմանի. մեկ մեծ ջրմուղ մը որ կուտա-

բավայի լեռներուն ջրերը կբերէ 32 աղբիւրներով քաղաքին մէջ կտարածէ :

Հարստութիւնն ու վաճառականութիւնը Մասրիտին մէջ ամենեւին ծաղկած չէ. ժողովրդեան գլխաւոր առուտուրն ու շահը արքունեաց եւ տէրութեան պաշտօնատարց հետ է : Մատրիտացւոց ամենեն մեծ զուարճութիւններն են զլամարտութիւնք, եկեղեցական հանդէսներ, թափորներ, եւ *թերուլլիա* ըսուած գիշերահանդէսներ, յորս կխօսին, կխաղան եւ նաեւ քիչ մը երաժշտութիւն կընեն : Ընդհանրապէս Մասրիտին շրջակայքը տխուր եւ ամայի են. կան նա եւ շատ մը թագաւորական ամարանոցներ, որոց անուանիներն են *Էսմորիալ*՝ զոր Փիլիպպոս Բ. թագաւորը շինեց իպատիւ Ս. Լաւրենտիոսի, որ պալատ է եւ միանգամայն վանք. եկեղեցւոյն մէջն են Կարոլոս հինգերորդին եւ Փիլիպպոս երկրորդին գերեզմանները. այս եկեղեցւոյն մեծ դռնոջ թագաւորաց համար միայն կբացուի, եւ այն ալ բոլոր բոլոր երկու անգամ, այսինքն մէկ մը իրենց մկրտութեան օրը, մէյմըն ալ իրենց մահուան : Էսքորիալէն ետքը անուանի են *Բազա-տէղ-Բանիոյ* գեղեցիկ պարտիզով. *Էլ-փարտոյ* կաղնեաց անտառով եւ պարտիզով. *Վիլլա-Վիսիոզա* ուր Փերդինանտոս Զ. թագաւորը մեռաւ 1759ին. *Թորիսա Զարկուէլա*, եւ *Սրանխուէզ* :

ԿԵՆՑԱՂՕՒՏ ԲԱՆՔ

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ.

Գ.

Հազիւ արշալոյսն սկսեր էր երկնքին արեւելեան կողմը ճերմկկցընել՝ Պ. Արշակ ընտանեօքը բլրակին վրայ հասաւ : Իրենց բոլոր ուղղութիւնը առջեւնին բացուած նրաշալի տեսարանին տալով կտեսնէին որ գիշերը դեպի արեւմուտք կդիմեր, աստղերն աներեւոյթ կըլլային, եւ կամաց կամաց առաւօտեան լոյսը ամեն տեղ տարածուելով՝ այս մեր կիսագունտը ճշուլագեղ ալիքներովը կողողէր : Վերջապէս արեւը ծագեցաւ այնպէս պայծառ որ աչքերնին չէր զօրեր վրան նայիլ : Այն ատեն սկսաւ Արշակ որդուոցը խոստացած դասախօսութիւնը :

Անշուշտ ձեզի այնպէս կերեւայ, սիրելիք, ըսաւ բարեսէր եւ ուսումնասէր ծերունին, որ արեգակը ուրիշներնին այն կետեն ելաւ ուսկից որ նախ սկսաւ երեւիլ. եւ այնպէս մը կկարծուի որ երկնից անծուն տարածութեանը մէջ քանի կերթայ աւելի կբարձրանայ, որպէսզի մեզի տուած լոյսը ուրիշ տեղեր ալ տանի տայ : Առաջ երկար ժամանակ այսպէս կկարծէին մարդիկ, այսպէս ալ պիտի կարծեն միշտ անոնք որ հեռւէ պիտի չըլլան մտքերնին լուսաւորելու գիտութեամբ, վասն զի աչքերնուս բնականապէս ասանկ կտեսնուի: Հիներեն ոմանք կըսեին, — ժողովուրդներ կան նաեւ հիմա որ այնպէս կկարծեն — , թէ երկիրս տափակ է ու ջորս դին ջուր պատած, եւ ջրին մէջեն արեգակն ամեն օր կելլէ իր սովորական ընթացքը կատարելու համար :

Այն դրութիւնը որով կկարծեն մարդիկ թէ արեգակը երկրիս չորս կողմը կդառնայ՝ *դրութիւն Պտղոմէոսի* կըսուի. բայց երեք հարիւր տարիեն աւելի է որ եղած այլեւայլ զննութիւններով այս դրութեան սխալ ըլլալը իմացուեցաւ * :

Հիմակուան ընդհանուր կարծիքն այն է թէ երկիրս պզտիկ մոլորակ մըն է, եւ ուրիշ մոլորակաց հետ կը դառնայ արեւուն չորս դին, որ աղբիւր է լուսոյ եւ բազմաթիւ աշխարհներու կեդրոն : Արեւը աչքով տափակ բոլորակ մը կերեւայ, բայց թեորյան հեռադիտակով նայինք՝ գունտի ձեւ ունենալը կտեսնուի : Տիեզերաց վրայ սփռած չերմութիւնն ու լոյսը տեսնելով՝ կիմանանք որ արեւուն ներքը կրակ է, եւ կամ գունտ մըն է որ կրակի պէս միշտ կվառի կբորբոքի, բայց ստոյգը չենք գիտեր : Վրան տեսնուած բծերն

(*) Կերեւայ թէ երկրիս արեւուն չորս կողմը պտըտելուն կարծիքը նախ Իկետաս Սիրակուսացին ունեցեր է. ետքէն իրեն հետեւեցան, յորս անուանի է Արիստարքոս աստեղաբաշխը՝ որ Քրիստոսէ 280 տարիի չափ առաջ Աթենքին մէջ դատապարտուեցաւ իբրեւ աստուածոց դէմ բոլոր մոլար նոր բաներ սովրեցնող : Այն կարծիքը մոռցուած մնաց գրեթէ մինչեւ Քրիստոսի 1540 թուականը, եւ այն տարին Կոպեռնիկոս հռչակաւոր Բրուսիացի աստեղաբաշխը այլ եւ այլ հաշիւներով հաստատեց զայն : Իրեն հետեւողացը մէջ ամենեն անուանին է Գալիլեոս իտալացին, որ Արիստարքոսեն ալ դժբաղդ գտնուելով՝ Հռովմայ կրօնաքննութեան առաւոր ատենին մատնուեցաւ, եւ անոր ձեռքեն ազատելու համար ստիպուեցաւ խոնմտանքին դէմ հրապարակաւ ըսել թէ սխալեր է, սովրեցուցած կարծիքը ծուռ է: Բայց քանի որ այն առաւոր ատենին մարդասիրական զգացքները զուլցան բթացան, Կոպեռնիկոսի ու Գալիլեոսի ճշմարիտ վարդապետութիւնները ամեն տեղ տարածուեցան աներկիւղ :

հասկըցաւ աստեղաբաշխը՝ որ արեւը անդադար ինք իր վրայ կդառնայ, վասնզի այս բծերը հաստատուն մէկ տեղ մը չեն կենար, գունտին դառնալովը մէյ մը մէկ ծայրը կերեւան՝ մէյ մը մէկալը. եւ դիտեր են որ առջի տեսնուած տեղերնին նոր տեսնուելու համար քսանըեօթը օր պետք է վրան անցնի, եւ արեւմուտքէն դէպի արեւելք կերթան. յորմէ կիմացուի թէ արեւն ալ նոյն ուղղութեամբ կդարձի, այսինքն արեւմուտքէն դէպի արեւելք: Արեգակն անդադար ջորս դիեն ճառագայթներ կարձակէ, այն ճառագայթներով է որ բոլոր տիեզերք կլուսաւորուին ու կտաքնան. լուսոյն տաքցուցիչ զօրութիւնն ունենալուն չենք այն փորձն որ ամեն մարդ ըրած կամ տեսած է, այսինքն թէ ոսպնաձեւ ապակիով մը արեւուս ճառագայթներն որ ամփոփուին՝ լուցկին (*զաւ*) կվառնկի:

Քաջ աստեղաբաշխ հաշուեր են որ լոյսը ուրկէ վայրկեան մէջ արեւեն մեզի կհասնի, եւ երկրիս արեւեն ունեցած միջին հեռաւորութիւնն է՝ ըստ ոմանց՝ 9, 557, 266 բիւրամեր (21, 458, 850 մղոն), եւ ըստ այլոց 18, 766, 666, բիւրամեր (42, 975,000 մղոն): Երկիրս՝ արեւեն մէկ միլիոն չորս հարիւր հազար անգամ պզտիկ է: Արեւուն այս սարսափելի մեծութեանը առջեւ մեր փոքրկութիւնն ու ոչնչութիւնը լաւ կհասկընամք. սակայն աչքերնիս տիեզերաց անհուն տարածութեանը մէջ արեւեն ալ անդին կտարածէ իր տեսութիւնը, եւ մտքերնիս՝ որ պզտիկ գլխուընուս մէջ ամփոփուած կեցած է, իբրեւ իբանտե դուրս կելլէ կարձրկուի ու կերթայ միջնեւ այն հրաշալեաց աղբիւրին կհասնի:

Սակայն պետք չէ կարծել որ տիեզերաց լուսատուն ջանը միայն արեգակն ըլլայ. երկնքին վրայ տարածուած անթիւ անհամար աստեղաց մէջ այնպիսի լուսափայլ գունտեր ալ կան՝ որ արեւուն պես անշարժ են, ուստի եւ *հաստատուն աստեղ* ըսուած են, եւ անոնց մեզի արեւեն շատ աւելի պզտիկ երեւնալուն պատճառն այն է՝ որ մեզմէ շատ աւելի հեռու են. եւ որովհետեւ աշխարհիս անմիջապես լուսաւորելու պաշտօնը չունենալով խորհրդաւոր ու անբռնափելի հեռաւորութեան մը մէջ կդողդողան, ուստի եթէ դիտակով ալ գիրենք դիտեմք՝ պարզ աչքով տեսածներնիս աւելի բան չեմք տեսներ: Կարելի է որ տիեզերաց անհուն տարածութեան անդնդոցը մէջ ուր մեր աչքին տեսութիւնը չկրնար հասնիլ՝ ըլլան ուրիշ բազմաթիւ հաստատուն ու շարժուն աստղեր, ուրիշ արեգակներ եւ ուրիշ աշխարհներ: Աշխարհիս կարգաւորութիւնը ուր կողմն ալ քննեմք՝ Աստուծոյ ամենակարողութեանն ու անհուն իմաստութեանը արժանի գործ մը կգտնեմք, մեր յետին անկարողութիւնը տեսնելով կխոնարհիմք անոր առջեւը, եւ նոգւով եւ ճշմարտութեամբ զինքը կպաշտեմք:

Հաստատուն ըսուած աստղերնէն զատ կան ուրիշ աստղեր ալ՝ որ *մոլորակ* կամ *թափառական աստեղ* կկոչուին, վասնզի անդադար տեղերնին կփոխեն, եւ ասոնք երկու խումբ կբաժնուին, Գլխաւոր եւ Երկրորդական: Գլխաւորներն արեւուն չորս դին կդառնան, ինչպես Երեւակ, Լուսնքագ, Հրատ, Երկիր, Աստղիկ (Արուսեակ), Փայլածու, Ուրանոս եւ Պոսիդոն: Երկրորդականները մէկքանի գլխաւորներուն բոլորտիքը կդառնան, ինչպես որ Լուսինը երկրիս, եւ ասոնք *արբանեակ* կկոչուին:

ՓԱՅԼԱԾՈՒՆ մոլորակաց ամենեն փոքրն է ու արեւուն ամենեն մօտ, իրեն պես ուրիշ մը չկայ որ այնչափ քիչ ժամանակի մէջ այն շրջանը կատարէ: Թէպետեւ միւս մոլորակներէն աւելի փայլուն ու լուսաւոր է, սակայն արեւուն շատ մօտ ըլլալուն համար անոր ճառագայթներուն մէջ կընկղմի, եւ անկարելի կըլլայ զինքը տեսնել. արեւուն սկաւառակին վրայեն անցած ժամանակը միայն կերեւնայ, այն ալ սեւ կետի մը պես: Նեւտոն հռչակաւոր անգղիացի աստեղաբաշխը կրսէ թէ փայլածուին վրայ արեւուն լոյսն ու ջերմութիւնը ամառուան ամենեն տաք ատեն երկրիս երեսը եղած լուսեն ու ջերմութենեն եօթն անգամ աւելի սաստիկ են: Կկարծուի թէ մեր հողագնտեն տասնըհինգ անգամ փոքր է: Արեւեն ունեցած հեռաւորութիւնն է՝52,644,000 հազարամեր: Իր առանցքին վրայ կդառնայ 24 օրուան ու 51 վայրկեան մէջ:

ՈՒՏՈՂԻ, որ նաեւ *Արուսեակ*, *Առտու Աստղ* եւ *Լուսաբեր* կկոչուի՝ երբ արեւուն շատ մօտ ըլլալովը առատ լոյս կառնուն անկէց՝ եւ անոր ելլելեն առաջ կերեւայ, եւ *Գիշերավար*՝ երբ արեւը մտնելեն յետոյ երեւայ: Աստղկան վրայի երեսը անհատաստար ըլլալուն՝ ամեն կողմեն լոյս կցոլացընէ. որով եւ հաստատուն աստեղաց պես կշողայ: Արեւեն ունեցած միջին հեռաւորութիւնը գրեթէ 11 միլիոն բիւրամեր է(27 միլիոն մղոն): Արեւուն չորս դին կշրջի 224 օրուան, 16 ժամուան ու 49 վայրկեան մէջ. իսկ իր առանցքին վրայ կդառնայ 23 ժամուան, ու 20 վայրկեան մէջ: Հինգ մեթրի չափ երկայնութիւն ունեցող դիտակով մը նայած ատենիս պարզ աչքով տեսնուած լուսնին մեծութենեն երեք անգամ աւելի մեծ կտեսնեմք: Արուսեակը միշտ չերեւնար, օրուան մէջ 3 կամ 4 ժամ միայն կերեւայ, այն ալ կամ առաւօտը դէպի արեւելք, եւ կամ երիկունը դէպի արեւմուտք: Մեր երկրիս նման՝ անոր չորս դին ալ մթնոլորտ պատած է, յորում լուսնին երեւոյթներուն պես երեւոյթներ կերեւան:

ԵՐԿԻՐ, որ մեր պզտիկութեանը ճայելով սարսափե-
լի մեծութիւն ունի, աշխարհիս դրութեանը մէջ փո-
քրիկ աստղ մի է : Արեւուն ունեցած միջին հեռաւո-
րութիւնը է 15, 269, 991 բիւրամեթր, (34, 337, 480
մղոն) , եւ լուսնին ունեցած միջին հեռաւորութիւնը
38, 414 բիւրամեթր 6 հազարամեթր (86, 324 մղոն):

Երբոր երկրիս վրայ խօսիմ իբրեւ մարդուս բնա-
կարանին վրայ՝ այն ատեն կբացատրեմ նաեւ ա-
րեւուն ու իր վրայ ունեցած շարժմունքները. հոս
մոլորակաց վրայ միայն է խօսքս :

ԱՍՏՂՆ ԱՌԱՒՕՏՈՒ.

ԱՌ Տ. Վ*** Ք.-Ի.***

—

Որ իդեմս ադօտ
Երկնից յառաւօտ
Ձերդ բոց վառ իվառ
Ցարծաքի բուրվառ
Շողաս կաբմրորակ
Պայծառ Արուսեակ.

Ո զչինչ քո նըշոյլ
Ձամպովք վարդահոյլ
Արկանես այգուն,
Եւ մերք իծուխն
Դեռազարքն յալիս
Իծուփ սոչոսկիս.

Իբր ըզձիւնաթոյր
Կարապին փետուր
Իկապոյտ լըճին,
Կամ զերդ իմբքին
Ծընօտից հովիտ
Սահուն ինչ ժըպիտ.

Աստղիկ, ով յետին
Ցակինք գիշերին,
Իբր իշողշողուն
Ականց անդ պարուն
Հանդիսին նըշխար
Վայրանկեալ գոհար:

Քո այնչափ գրաբր
Է ցոլ լուսազարդ'
Զի եւ այգն ըզքեզ
Ոտմ ընդառաջես'
Ձակատուն իքոյ
Ցեռու շող առ շող:

Տունջեան մերձաւոր,
Քաղցր առեւտուր,
Այն ինչ ես յերկին'
Որ ինչ մեր հովտին
Բընքոյշ մանուշակ
Ձեփիւռից գուշակ:

Քոյդ իփայլ յերկնուստ
Մութն առնու փախուստ,
Մըրրիկք բըռնազոյն

L'ÉTOILE DU MATIN.

A M. V** C.-I.**

—

Toi qui dès le matin,
Sur la face sombre du ciel,
Comme la flamme étincelante
Dans un encensoir d'argent,
Resplendis d'un blond éclat,
O douce étoile du matin!

Toi dont la blanche lumière
Sur les nuages de rose
Se répand au point du jour,
Et qui parfois glisse ondoyante
Sur les vagues de la mer
A peine éveillées;

Semblable à l'aile du cygne,
Plus blanche que la neige,
Dans son lac d'azur,
Ou comme sur le creux sillon
Des joues sombres
Un sourire fugitif.

Étoile, ô toi,
Dernière jacinthe de la nuit;
Comme après le bal
La plus brillante des perles éclatantes
Le rubis tombé par terre,
Reste de la fête.

Ta lumière brillante
Est si gaie, que l'aurore
Que tu devances
T'a choisie pour orner le voile
Qui couvre son front,
En entrelaçant rayons sur rayons.

Du jour qui arrive
Doux précurseur,
Tu es dans le ciel
Ce qu'est pour notre vallée
La tendre violette :
Présage du printemps.

A ta clarté
L'ombre s'enfuit du ciel;
Les orages furieux

Ամբեալ ցածնուն,
Զերդ ցասմունք յուզմանց
Իկուսին նայեաց :

Տես, ահա ծաղկունք'
Կենդանի ակունք,
Աչօք ցօղախիտ
Բան ըզմարգարիտ
Ցողջոյն ամօրդած
Ծիծաղին կենաց :

Առանիկ առուակ
Ցանդոյրն անդ ծրմակ
Ըզվիժական անոյժ
Գըլէ նոր յաշխոյժ,
Խոխոջ եւ փըրփուր
Սըփռեալ հեշտալուր :

Տես իսաղարքուն
Ծառոց' թեւք փայլուն
Զերդ ինով տերեւք
Թօքափին թեթեւք'
Իջանեն յարօտ,
Կամ ճախրեն ընդ օդ :

Տես ահա սպիտակ
Գառանց գումարտակ'
Ընդ անամպ երկնաւ
Եւ գյոյր դալարեաւ
Զեան ինչ պաղպաջուն
Դեզք բուին ծրփուն :

Առանիկ դրընդիւն
Վանէ գլրուբիւն,
Վէժք, թիռ, ոտք' եւ վանգ
Ազգ ազգ տան անդ գանգ,
Զայնք' որ համօրէն
Զօր ծրնեալ ասեն :

Տես, Աստղիկ..... այլ Ըր
Սրաքեւ դուս խուսեր.....—
Ո՞ւն, այսպէս ու իկրից
Անդ շըշուկ սըրտից
Խոյս տայ դողդոջուն
Բաղցր անմեղութիւն :

ԽՈՐԽՈՐՈՒՆԻՆ.

Se calment et s'apaisent,
Comme le courroux le plus violent,
Au sourire de la vierge.

Vois les fleurs,
Ces perles vivantes,
Aux yeux pleins de rosée,
Plus brillantes que l'émeraude,
Sourire avec pudeur
En saluant la vie.

Vois le ruisseau
Dans le vallon paisible,
Rouler avec une vigueur nouvelle
Ses ondes naguères si calmes
Et lancer l'écume sur ses bords,
Au chant de son doux murmure.

Vois du haut des arbres touffus
Ces ailes brillantes,
Comme au souffle du vent
Tombent les feuilles légères,
S'abattre sur la prairie
Ou voltiger dans les airs.

Vois les blancs troupeaux d'agneaux,
Sous un ciel sans nuages,
S'ébattre bondissants
Dans les gras pâturages,
Semblables à des amas
D'une neige éblouissante.

Mais voici que le bruit chasse le silence,
Le mugissement de la cascade,
Le battement des ailes,
L'écho des pas et des voix
Produisent mille sons divers
Qui tous annoncent la naissance du jour.

Vois : ô petite étoile...
Mais pourquoi t'es-tu enfuie?...
—Hélas! c'est ainsi
Qu'au trouble des passions du cœur
S'enfuit tremblante
La douce innocence.

CORÈNE V. CALFA.

ՀԱՆԵԼՈՒԿ.

Գըլուխն ու վիզ երբ մեկտեղ են'
Այբուբենիդ տառ մըն են.
Բայց քե գըլուխն ալ դուս կըտրես'
Դարձեալ ինք ողջ է, գիտես.
Վախցիր իրմե երբ գլուխ ուներ,
Կըսեն քե նա « գլուխ չունի ».
Բայց դողացիր անգլուխ մարմնեն,
Զընգըզեր գինքն իր ձեռքեն.
Թե չես հաւատար ինձ զարմացած'
Հարցուր քու խեղճ հայրենեաց :

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ Հանելուկն եր ԳԻՐՔ

Propriétaire-gérant : A. LACHAT.

Ի ՓԱՐԻԶ, ԱՐԱՄԵԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ.

Paris.— Typographie Arménienne Walder, rue Bonaparte. 44

Ճանազեան Մ. Մարիցա Օրիորդ, Պոլիս:
Ճեմարան Ս. Փրկչին, Պոլիս :
Ճեզայիրլեան Մկրտիչ Ամիրայ, Պոլիս :
Ճեզայիրլեան Սրբոյն Տիկին, Պոլիս:
Ճելալեան Տ. Թովմաս , Դավրէժ:
Ճիզմէճեան Տ. Համբարձում , Պոլիս:
Ճշմարտախօսեան Տ.Ստեփան, Զմիւռնիա:
Ճոպաբեան Տ. Ներսես, Պոլիս :
Մալայեան Տ. Լուսեղէն, Նոր Նախիջեւան:
Մակազեան Տ. Գրիգոր, Պոլիս:
Մամիկոնեան Մամբրէ Վարդապետ, Պոլիս:
Մանանեան Տ.Միքայէլ, Փարիզ:
Մանդինեանց Տ. Գեորգ, Տփխոյ:
Մանուէլեանց Յար.Միքայէլեան, Ագուլիս:
Մանուկ Պէյ, Գրիգոր Ֆերմատ, Փարիզ:
Մանուկ Պէյ Յովհ. Մուրատ, Փարիզ:
Մանուկեան Խահակ սարկաւագ,Էջմիած.
Մաոքեոս Վ. Առաջնորդ Եղդատու.:
Մարգարեան Տ. Մարաիրոս , Պոլիս :
Մարգարեան Տ. Յարութիւն , Պոլիս :
Մարգարեան Տ. Յովհաննէս, Պոլիս:
Մարգարեան Տ. Ն. կ., Վէննա.
Մարգարեանց Տ. Նիազ. Ագուլիս:
Մարկոսեան Գրիգոր Էֆենտի, Պոլիս:
Մարկոսեան Մահտ. Տ. Կարապետ, Պոլիս :
Մարտիրոսեան , Ճառա:
Մարտիրոսեան Տ. Սարգիս, Պոլիս:
Մելգոնեան Գեորգ Էֆենտի, Նիկոմիդիա :
Մելգոնեան Տ. Նշան , Պոլիս:
Մելքում Միրզա խան, Թեհրան :
Մելքումեանց Տ.Բարր. Յովհաննէսեան,Տփ
Մելիք-Ադամեանց Տ. Ստեփան, Տփխոյ.
Մելիք Ասլանեան Ադամ. եւ Բարսեղեանց,Պ.
Մելիքեան , Պուքրէշ :
Մելիքեանց Տ. Գրիգոր, Տփխոյ :
Մինրդատեան Տ. Թադէոս , Պոլիս :
Միրզոյեանց Տ. Գաբրիէլ Մինասեան, Տփխ.
Միրզոյեանց Տ. Յովհ. Մինասեան, Տփխոյ:
Միսաքեան Տ. Առաքել, Պոլիս:
Միսաքեան Եղբարք , Փարիզ :
Միսաքեան Տ. Ճիվան Բինկեանցի , Պոլիս:
Միսաքեան Տ. Նիկողոս , Պոլիս:
Միսաքեան Տ. Պետրոսիկ, Պոլիս :
Միսաքեան Տ. Սարգիս, Հալէպ:
Միսաքեան Պ. Վ.Ստեփան , Պոլիս :
Միրիմանեանց Տ. Զաքարէ , Տփխոյ :
Միհինտիսեան Տ. Մարտիրոս , Պոլիս:
Միհինտիսեան Տ. Յովհաննէս , Պոլիս:
Միխիթարեանց Աբէլ Վ. Քէֆէ:
Մկրեան Եղբարք , Պանչէճիկ :
Մկրեան Տ. Սարգիս , Պոլիս:
Մկրտչեան Տ.Յար.Աճէմեանց,Նախիջեւան:
Մոզեան Տ. Գրիգոր, Բժիշկ, Պոլիս :
Մոմճեան Տ. Մերկեան, Քէֆէ :
Մոմճեան Պ. Առաքել , Փարիզ:
Մոմճեան Տ. Մկրտիչ , Պոլիս :
Մոմճեան Տ. Յարութիւն Պոլիս:
Մոսկոփեան Պ. Յակովբ, Նիկոմիդիա :
Մուշեղեան Տ. Ս. Մէնջոքըր :
Մուրատեան Պ. Աբրահամ, Պոլիս :
Մուրատեան Տ. Յակոբ , Հիւպատոս Բրուսիոյ եւ Ամերիկայ, Զմյռնիա :
Մուրատեան Պ. Մկրտիչ , Պոլիս:
Մուրատեան Պ. Մարտիրոս, Պոլիս :
Մուրատեան Տ. Յարութիւն , Պոլիս :
Մուրատեան Տ. Պողոսիկ, Պոլիս:
Մսերեան Տ. Գաբրիէլ , Եաշ:
Մսերեան Պ. Զարմայր , Մոսքուա :
Մսերեան Մսեր վարժապետ, Մոսքուա:
Մսերեան Տ. Յովհաննես, Պորուշան :
Յակոբեան Տ. Յարութիւն , Պորուշան :
Յակոբեան Տ. Պողոս,Պոլիս:
Յակոբջանեանց Յակոբ Մկրտչ. Ախլցխա :
Յարութիւնեան Տ. Եղիազար , Ճալիսա:
Յարութիւն վարդապետ, Խարբերդ:
Յարութիւնեան Մարիամ-Յակոբ Տիկին, Պարտիզա : (2 օր.)
Յարութիւնեան Տ. Միք. Ստեփանեանց,Տփ.
Յովակիմեան Տ. Գ. Միհրան , Ճառա:
Յովակիմեան Տ. Յովհ. Մէնջոքըր :
Յովասափեանց Տ. Յովսէփ, Կարին:
Յովհան , Ճառա:
Յովհաննեան Բժիշկ , Պոլիս :
Յովհաննէսեան Տ. Գրիգոր, Աղէքսանդրիա :
Յովհաննէսեան Տ.Յար.Սարգսեան,Սիւնեցի:
Յովնանեան Տ. Յովհաննէս, Նիկոմիդիա :
Յովնանեանեան Տ. Ռափ. Աղէքսանդրոյ:
Յորդանանեան Պ. Մանուկ, Ճառա:
Նազարեան Թորոս Վարժապետ, Պոլիս :
Նազարեանց Առաքել Ավանեան , Շուշի :
Նազարեբեան Տ. Խաչատուր , Պոլիս:
Նահապետեան Տ. Գրիգոր , Պարտիզա :
Նահապետեան Հ. Եղիա, փոխ. Պատ.Պոլիս:
Նայման, Միւնիխ:
Նաթիրեան Տ.Աբիստակես, բժիշկ, Տփխոյ :
Ներիման Միրզա խան, Դեհրան:
Ներսեսեանց Տ. Մովսես, Շամախի :
Ներսեսեանց Տ. Ներսես , Տփխոյ :
Ներսէսեան Տ. Թով. Ա.Ֆթանդիրեան,Ղզլար:
Նէվրուզեան Տ. Յարեթիկ , Պոլիս :
Նիկողայոս Վարդապետ, Պոլիս:
Նորատունկեան Տ. Յակոբ, Պոլիս:
Նորատունկեան Տ. Սիմոն, Պոլիս:
Նուպար Պէյ, Քահիրէ :
Շահմուրատեան Տ. Մարտ.Եսայեան,Շուշի:
Շահնազարեանց Տ. Յարութիւն, Տփխոյ:
Շահպազեան Տ. Զենոբ , Պոլիս :
Շահպազեան Պ. Կարապետ, Փարիզ :
Շահպազեան Պ. Նազարէթ, Պոլիս:
Շահրինարեանց Տ. Ադէք. Արզում. Փարիզ:
Շանշեանց Պետրոս Սամուէլեան, Տփխոյ :
Շաշեան Տ. Բեդրաք , Պոլիս:
Շապաճեան Տ. Յ. Մատթէոս, Պոլիս :
Շարախարունեան Տ. Գեորգ, Երեւան:
Շարոյեանց Տ. Պետրոս Եսայեան, Տփխոյ :
Շիրինեան Տ. Մահտեսի Նշան , Պոլիս:
Շիրինեանց Յոհաննջան Մահտ. Յար. Շուշի :
Ոսկեհան Ալեքսան Վ. Պոլիս :
Ոսկեհան Տ. Կարապետ, Պոլիս :
Ոսպիշենի, Փարիզ :
Ջամուրճեան Տ. Յովհաննէս, Պոլիս.
Ջալեան Տ. Եղիազար , Պոլիս :
Ջանկեան Տ. Մ. Ե. Եղիա ,Զմիւռնիա :
Ջաբբրեան Տ. Ս.Յովհաննէս,Զմիւռնիա:
Ջեռնիկեան Տ. Գեորգ, Մելիտուպոլիս:
Ջեմպէրեան Տ. Վարդերես , Քէֆէ:
Ջրագեան Ս.բրիւն Պէյ, Ադէքսանդրիա:
Ջրագեան Յակորիկ Աբրիւն-Պէյ, Փարիզ :
Ջրագեան Յովսէփիկ Աբրիւն-Պէյ , Փարիզ:
Ջօպանեան Տ. Յակոբ , Պոլիս:
Պալասանեան Տ. Աստուածատուր , Եաշ:
Պալղազարեան Տ. Ղուկաս, Զմիւռնիա :
Պալըզճեան Տ. Մանուկ, Պոլիս:
Պալիկոյ Տրպեն, Պոլիս:
Պայանորրեան Տ. Նասիպ , Պոլիս:
Պապայեան Տ. Սիմոն , Պոլիս :
Պապասիմեան Տ. Գեորգ , Քէֆէ:
Պապունիկեան Տ. Խաչիկ , Եաշ :
Պապունց Սարգիս Մկրտիչեան, Նուխի :
Պասմաճեան Տ. Սերովբէ , Պոլիս:
Պատկանեանց Միքայէլ Սերոբեան , Տփխ:
Պարտիզպանեան Տ. Առաքել, Պոլիս :
Պարտիզպանեան Պ. Թագուր , Փարիզ :
Պարտիզպանեան Պ. Կարապետ, Փարիզ :
Պետրոսեան Տ. Պետրոս, Տփխոյ :
Պետրոսեան Տ. Ազարիա, Քահիրէ:
Պետրոսեան Տ. Պողոս, Պոլիս. (2 օր:)
Պերկամպեան Տ.Մ. Գ. Յակոբ, Զմիւռնիա:
Պէյազեան Տ. Յ. Սերովբէ , Նիկոմիդիա :
Պէյլերեան Տ. Յակոբ Կեսարացի, Պոլիս :
Պէյլիկճեան Տ.Մարտիկ, Պոլիս:
Պըլըզեան Տ. Յակոբ , Եաշ :
Պըլըզեան Տ.Յարութիւն , Պորուշան:
Պուդդուրեան Տ. Կարապետ , Պոլիս:
Պրաշովեան Տ. Պողոս , Պորուշան:
Պողոսեան Ղեւոնդ Վարդեանց, Ղզլար :
Պոյաճեան Տ. Յովհաննէս, Պոլիս :
Պօշոնախեան Տ. Սարգիս , Պոլիս :
Ջունդ Տ. Աստուածատուր, Պոլիս:
Ջունդ Տ. Ստեփան, Կայզ:
Ռաֆայէլեան Տ. Եղուարդ, Լոնտոն :
Ռիզա Հասան Փաշա, Ռատիկան Պատերազմի , Պոլիս:
Ռոտոմեան Պ. Սողոմոն Իվանիչ , Տփխոյ:
Սախայեան Տ. Աղէքսան, Պոլիս :
Սախայեան Տ. Օ. Կարապետ, Մէնջոքըր'
Սահակեան Տ. Կարապետ, Պոլիս :
Սամանճեան Տ. Մկրտիչ, Պոլիս :
Սանասարեանց Մկր.Սարգսեան, Վան:
Սառաջեանց Միքայէլ , Տփխոյ :
Սարաֆեան Տ. Յովհաննէս, Պոլիս: 1
Սարգսեան Տ. Մ. Ղազարոս , Կէյվէ :
Սարգիսեան Տ. Ստեփանոս , Տփխոյ :
Սարըյեան Տ. Թ. Գրիգոր, Պոլիս :
Սարիմեան Մազսուտ Ամիրայ, Փարիզ :
Սարկաւագ Յակոբոս, Ս. Էջմիածին:
Սառայանեան Տ. Յովհաննէս, Պոլիս :
Սառայանեան Տ. Հ. Թ. Տիգրան, Զմիւռնիա :
Սեյիմեան Տ. Գեորգ , Սիմֆերոփոլ:
Սեյիմեան Տ. Կարապետ, Խարասուպազար:
Սեն-Մարք-Ժիրարտեն, Փարիզ:
Սրվաճեան Տ. Յարութիւն, Պոլիս.
Սիմեոնեան Տ. Սրապ, Պոլիս:
Սիրունեան Տ. Յակոբ, Պոլիս:
Սուլուխանեան Տ. Նիկողայոս , Պոլիս :
Սուպաշիեվ Ամէյեան , Քէֆէ:
Սվեշնիկեանց Տ. Աւետիք Ատտ. Տփխոյ:
Սվեշնիկեանց Տ. Սարգիս, Տփխոյ:
Ստեփան Վ. Առաջն. Նիկոմիդիոյ, Արմաշ:
Ստեփանեանց Տ. Խաչատուր ,Բժիշկ, Տփխ.
Ստիմարաճեան Տ. Գեորգ, Նիկոմիդիա:
Սրմազաշեան Տ. Լուսիկ , Եաշ :
Վարդազարեան Տ. Յակոբ, Ագուլիս :
Վարդան փաշա , Պոլիս:
Վարդանեանց Սող. Յարութ. վարժա. Տփխ.
Վարդանեան Տ. Գր. Սուքիասեանց,Ղզլար.
Վարպետեան Տ. Յովսէփ, Պոլիս:
Վիշենեան Տ. Սերովբէ, Պոլիս :
Տակեսեան Պ. Յովհաննես, Փարիզ :
Տակեսեան Պ. Սիմոն , Փարիզ:
Տամաթեան Տ. Յակոբ , Պոլիս :
Տամաթեան Պ. Խաչիկ , Փարիզ :
Տատեան Առաքել Էֆենտի, Պոլիս.
Տատեան Մկրտիչ Էֆենտի, Փարիզ.(2 օրի.)
Տատեան Յովհաննէս Պէյ, Պոլիս. (4 օրի.)
Տատեան Պողոս Պէյ, Պոլիս . (4 օրինակ:)
Տատուտեան Տ. Պողոս, Պոլիս :
Տատուտեան Վ. Տիգրան, Պոլիս :
Տէմիրճիպաշեան Տ. Ենովք , Պոլիս :
Տէմիրճիպաշեան Տ. Պետրոս , Պոլիս:
Տէմիրճիպաշեան Պ. Սեպուհ, Փարիզ:
Տէյիրմենճեան Տ. Գրիգոր , Պոլիս :
Տէր-Առաքեանց Տ.Գրիգոր քահանայ, Շուշի :
Տէր Գեորգ քահանայ ,Խասգիւղ, Պոլիս :
Տէր Գրիգոր քահանայ Պէշիկթաշլու,Պոլիս :
Տէր-Գրիգորեանց Տ. Կարապետ քահ. Տփխ.
Տէր-Գրիգորեանց Մկրտիչ քահանայ , Տփ.
Տէր-Զաքարեանց Զաքար Յովհ. Երեւան:
Տէր Կարապետ Քահանայ, Չինկիլըրոյ :
Տէր-Կարապետեան Տ.Մկրտիչ, Ասլանպէկ:
Տէր-Ղազարեանց Պ. Յովակիմ , Տփխոյ :
Տէր-Մարուգեանց Տ. Մարուգէ, Պոլիս :
Տէր-Միքայէլեանց Գաբրիէլ Յովհ. Տփխոյ :
Տէր-Մկրտիչեանց Առաքել, Ագուլիս :
Տէր-Մկրտչեանց Մահտ. Գալուստ, Ագուլիս
Տէր-Մկրտիչեանց Մարտիրոս, Ագուլիս :
Տէր-Յակոբեան Տ. Մկրտիչ, Պահչէճիկ:
Տէր-Յովսեփեանց Յովհաննէս, Տփխոյ :
Տէր-Յովսեփեանց Պ. Աստուածատ. Տփխոյ :
Տէր-Շմաւոնեանց Նիկողայոս Յով. Տփխոյ:
Տէր-Պետրոսեանց Տ. Ղազարոս, Տփխոյ :
Տէր-Պողոսեան Տ. Գալուստ, Պոլիս.
Տիվիտեան Տ. Առաքել , Պոլիս :
Տիւլորիէ Տ. Եղուարդ, Փարիզ:
Տոնիկի Զաբան Տ. Յովհաննէս, Պորուշան :
Բհիջեան Տ. Նշան, Պոլիս:
Փաթազեան Տ. Կարապետ, Պոլիս:
Փաթազեան Տ. Միրիձան, Պոլիս:
Փաթազեան Տ. Պետրոս, Պոլիս :
Փեշտըմալճեան Տ. Գեորգ , Պոլիս :
Փեշտըմալճեան Տ. Ծաճակ , Պոլիս :
Փիլոյեանց Տ. Յովհ. Եսայեան , Ղզլար:
Փոշինով Տ. Աղեքսանդր , Պոլիս :
Փոնդոյեանց Տ. Յովսէփ , Տփխոյ:
Փրիտոնեանց Տ. Թովմաս , Տփխոյ :
Քաթանեանց Տ.Յովհաննէս նկարիչ,Տփխոյ:
Քալանթարեանց Պ. Հայրապետ, Ագուլիս:
Քալտրըմճեան Տ. Լուկիանոս , Խարասուս:
Քանանեանց Տ. Գեորգ , Ղզլար :
Քարավազեան Ռոզա Տիկին, Փարիզ :
Քաֆաֆեան Տ. Մանուէլ , Պոլիս :
Քաֆաֆեանց Պ. Մկրտիչ, Տփխոյ :

ՑՈՒՑԱԿ ԲԱԺԱՆՈՐԴԱՑ ԱՄՍԱԳՐՈՑՍ.

Բեանեաեան Տ. Գրիգոր, Պօլիս :
Բերոբեան Մ. Համբարձում, Նիկոմիդիա :
Բեքխոդեանց Սողոմոն, Տիխիս :
Բեմխաճեան Տ. Գալուստ, Պօլիս :
Բեմխաճեան Պ. Արիստակես, Փարիզ :
Բեմխաճեան Պ. Դանիէլ, Փարիզ :
Բեմխաճեան Պ. Ռուբէն, Փարիզ :
Բեօշկեքեան Պ. Խաչատուր, Պօլիս :
Բիւրքճեան Տ. Յովհաննէս, Հալէպ :
Բիւրքճիխանեան Պ. Խաչատուր, Պօլիս
Բիւրքճիխանեան Տ. Կարապետ, Պօլիս :
Բիւրքճիխանեան Տ. Մկրտիչ, Պօլիս:
Բիւրքճիխանեան Տ. Մուրատիկ, Պօլիս:
Բիւվեճի Տ. Յարութիւն, Պօլիս :
Բոշարեանց Կար. Յար. Բժիշկ, Տիխիս :
Բոշոյեանց Տ. Սիրական, Աղեքսանդրուպոլ
Օտապաշեան Տ. Կարապետ, Սերաստիա :
Օտապաշեան Տ. Յովհաննէս, Վիեննա :
Օտապաշեան Պ. Սերովբէ, Փարիզ:
Օրբելի Տ. Յովսէփ քահանայ, Տիխիս :
Ֆեներճեան Տ. Յովակիմ, Պօլիս :
Ֆրենկեան Տ. Աբրահամ, Պօլիս :
Ֆրենկեան Տ. Յակոբ, կեսարացի, Պօլիս :
Ֆրէց Տ. Անտոն, Վիեննա :

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

ՀԱՅԿԱԶԵԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ.

Թուղթ Վահանայ Արշարունւոյ, Հ. Միքայէլի Ջամչեան ի Մխիթարեանց Վենետկոյ. (*Շարունակ.*) (Հայ.եւ Գաղղ.)
Անցք եւ ատորագրութիւն քաղքին Գանձակայ.

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ.

ՄԱՏԹԷՈՍ Սրբազան նորընտիր կաթուղիկոս ամենայն Հայոց, եւ ազգիս վիճակը.
Ֆուատ Փաշա, (Հայ. եւ Գաղղ.)
Խալիլեան ուսումնարան ի Թէոդոսիա. (Հայ. եւ Գաղղ.)
Ազգային դպրոց յեաշ.
Առ Խորեն Վ. Խորխոռունի.
Քանի մը խօսք *Տէր* եւ *Աղա* բառից գործածութեանը վրայ.

ՏԵՍԱՐԱՆՔ ԵՒՐՈՊԱՑ.

Մատրիտ.

ԿԵՆՑԱՂՕԳՈՒԻՏ ԲԱՆԵՐ.

Բնական Պատմութիւն. (Գ.)
Առտու Աստղ, Բերդուած (Հայ եւ Գաղղ.)

ՀԱՆԵԼՈՒԿ.

SOMMAIRE.

MUSÉE ARMÉNIEN.

Lettre de Vahan Archarouni, par le R. P. Michel Tchamitchian, mékhitariste de Venise. (Suite.) (Arm.-Franç.)
Histoire et description de la ville de Cantzag. (*Suite.*)

COURRIER ARMÉNIEN.

S. S. MADTHÉOS, nouveau catholicos de tous les Arméniens, et l'état actuel du peuple arménien.
Fuad Pacha. (Arm.-Franç.)
Ecole Khalibian à Théodosie. (Arm.-Franç.)
Ecole nationale à Jassy.
Lettre à M. Corène V. Calfa.
Observation sur les mots *Der* et *Aga*.

TABLEAU D'EUROPE.

Madrid.

CONNAISSANCES UTILES.

Histoire naturelle. (Ill.)
L'*étoile du Matin*. (Poésie.) (Arm.-Franç.)

ENIGME.

ԳԻՆ ԸՆԿԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ.

Փարիզ, սարեկան. . . . Ֆր. 25
Կոստանդնուպօլիս, Զմիւռնիա, Աղեքսանդրիա, Հընդկաստան. . . . . » 30
Ռուսաստան, Մոլտաւիա, Պարսկաստան. . . . . » 35
Գին միոյ տետրակի. . . . . » 5

PRIX D'ABONNEMENT:

Paris, par an. . . . . Fr. 25
Constantinople, Smyrne, Alexandrie, Indes. . . . » 30
Russie, Moldavie et Perse. » 35
Prix d'un numéro. . . . » 5

ԳՈՐԾԱԿԱԼՔ ԸՆԿԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ

ՓԱՐԻԶ, Տ. Ռայնվալտ գրավաճառ, իփողոցն Սեն-Փէր, 15.
ՄԵՆՉԷՍԹԸՐ, Տ. Եսայի Անուխեան եւ Ընկերք.
ՎԻԵՆՆԱ, Տ. Յակովբոս Արշակ, իՊիպէր Պասթայ, 659.
ՓԵԹԵՐՊՈՒՐԿ, Տ. Յակոբ Իսաքով, գրավաճառ.
ՊՕԼԻՍ, Տ. Մկրտիչ Մոմճեան.
ՋՄԻՒՌՆԻԱ, Տ. Ղուկաս Պալդազարեան.
ՆԻԿՈՄԻԴԻԱ, Տ. Սերովբէ Պէյազեան.
ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ, Տ. Գէորգ Եուսուֆեան.
ԵԱՇ ՄՈԼՏԱՒԻՈՅ, Տ. Յովհան Գարագաշեան.
ՊՈՒԹՈՒՇԱՆ, Տ. Յակոբ Մանուկեան.
ՏՓԽԻՍ, Տ. Աւետիք Էնֆիէճեանց.

ON SOUSCRIT

A PARIS, chez M. Reinwald, rue des Saints Pères, 15.
MANCHESTER, M. Esaï Anouckian et Cie.
VIENNE, M. Hagoposs Arschag, Biber-Bastei, 659.
SAINT-PÉTERSBOURG, M. Jacques Issakoff, libraire.
CONSTANTINOPLE, M. Meguerditch Momdjian.
SMYRNE, M. L. Balthazar.
NICOMÉDIE, M. Séropé Béyasian.
ALEXANDRIE, M. Georges Youssouff.
JASSY, M. J. Karakach, (magasin français.)
BOTOUSCHANY, M. Jacques Mani.
TIFLIS, M. Avédik Enfiédjian, libraire.

Փարիզ. Տպագրութիւն Սրմ. իՏպար. Վալտէրի, փող. Պոնափարթ թիւ 44.—PARIS. Typographie arménienne de WALDER, rue Bonaparte, 44.